

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԴԻՄԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



Րաֆֆի Յովհաննիսեանի ներկայացուցիչները Սահմանադրական Դատարանին առջև կը պատասխանեն լրագրողներու հարցերուն

Փետրուար 18-ին կայացած Հայաստանի նախագահական ընտրութիւններու պաշտօնական արդիւնքներով երկրորդ տեղը գրաւած թեկնածու՝ Րաֆֆի Յովհաննիսեանի ներկայացուցիչները դիմեցին Սահմանադրական Դատարան, պահանջելով անվաւեր հռչակել ընտրութիւններու վերաբերեալ կեղծողական լճատրական Յանձնաժողովի որոշումները եւ «արձանագրել ընտրութիւններու խակական արդիւնքները»:

Դիմումը Դատարան ներկայացուցին Րաֆֆի Յովհաննիսեանի «Ժառանգութիւն» կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան քարտուղար Զարուհի Փոստանջեան, «Ժառանգութեան» մամուլի խօսնակ Յովսէփ Խուրշուդեան եւ Րաֆֆի Յովհաննիսեանի նախընտրական շտաբի իրաւական խորհրդատու Կարէն Մեժլումեան: Կարեն Մեժլումեանը Սահմանադրական Դատարանի շէնքի

դիմաց հաւաքուած լրագրողներուն տեղեկացուց, որ դիմումը ընդունուած է դատարանի կողմէ եւ այն պէտք է քննարկուի տասը օրուայ ընթացքին:

«Մենք գտնուած ենք, որ իրաւական հիմքեր առկայ են, մնացածը՝ ինչպէս դատարանը որոշի», - յայտարարեց իրաւական խորհրդատուն՝ աւելցնելով, որ բազմաթիւ հիմքեր ներկայացուած են, սկսած ընտրակեղծիքներէն, վերջացած իրաւական հիմնաւորումներով:

«Ժառանգութեան» մամուլի խօսնակ Յովսէփ Խուրշուդեան յայտնեց, թէ ինչ կրնայ ըսել այն քննադատութեան առնչութեամբ, որ իգուր է Սահմանադրական Դատարանի դիմելը, քանի որ նախորդ նախագահական ընտրութիւններուն ընդդիմադիր թեկնածուները դիմած են ՍԴ, բայց բոլորն

Շաբ.ը էջ 4

ՆԱԽԱԳԱՀ ՕՊԱՄԱՅԻ ՇՆՈՐԱԴՐՈՒԿԱՆ ՆԱՄԱԿԸ՝ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Հայաստանի նախագահական պալատը հրապարակեց Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի հետեւեալ նամակը՝ յղուած Սերժ Սարգսեանին:

«Յարգելի՛ պարոն Նախագահ,

«Ցանկանում եմ շնորհաւորել Ձեզ Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնում վերընտրուելու կապակցութեամբ: Ակնկալում եմ, որ մենք շարունակելու ենք մեր համատեղ աշխատանքը, քանի որ մենք երկուսս էլ սկսում ենք մեր պաշտօնավարման երկրորդ շրջանը:

«Շարժուելով առաջ՝ կը ցանկանայի հիմնուել մեր երկրների եւ ժողովուրդների միջեւ գոյութիւն ունեցող ամուր կապերի վրայ եւ առաւել ընդլայնել մեր գործընկերութիւնը: Մենք մեծապէս յանձնառու ենք նպաստելու Հայաստանի զարգացմանը եւ ակնկալում ենք, որ Դուք Ձեր առաջնորդութեամբ առաջ կը տանէք ժողովրդավարութեան ամրապնդման եւ սնտեանական բարեփոխումների շարունակական գործընթացը, ինչը հնարաւորութիւններ կ'ընձեռի թէ՛ Հայաստանի ժողովուրդի եւ թէ՛ ա-

մերիկացիների համար, որոնք ակնկալում են ներգրուած ունենալ նշանակալի ներուժ ունեցող արժէքաւոր գործընկերող երկրում: Մենք կը շարունակենք մեծապէս աջակցել Լեոնային Ղարաբաղի խաղաղ գործընթացի առաջընթացին, որը պահանջում է բովանդակալից քայլ ձեռնարկել դէպի կարգաւորում, ինչը կ'ապահովի յարատեւ խաղաղութիւն եւ անվտանգութիւն: Ցանկանում ենք նաեւ շարունակել մեր աշխատանքը առաջ մղելու հայթուրքական յարաբերութիւնների հնարաւոր կարգաւորումը:

«Ձեր վերընտրուելը հնարաւորութիւններ է ընձեռում մեր երկու երկրների յարաբերութիւններն առաջ մղելու համար եւ Ձեր ժառանգութեան ստեղծմանը՝ որպէս առաջնորդի, որը խորացնում է Հայաստանում բարեփոխումները եւ առաջ տանում խաղաղութեան գործը ձեր ազգի եւ ձեր տարածաշրջանի ժողովուրդների համար:

«Վստահ եղեք, որ Միացեալ Նահանգները, որպէս Հայաստանի մշտական բարեկամ եւ գործընկեր, ձեր կողքին է այս վե՛հ նպատակներին հասնելու գործում»:

«ՖՈՐԴՍ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ՑՈՒՑԱԿԻՆ ՀԱՄԱԶԱՅՆ ՍԱՄՈՒԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏ ՀԱՅՆ Է

Ամերիկեան «Ֆորպս» պարբերականը (Forbes) հրապարակեց աշխարհի միլիարատէրերու տարեկան իր ցուցակը, որուն մէջ տեղ գտած են նաեւ հայեր: Ռուսաստանի քաղաքացի, գործարար Սամուէլ Կարապետեան իր 3.8 միլիար տոլարի կարողութեամբ Forbes-ի ցուցակին վրայ կը գրաւէ 353-րդ տեղը: Կարապետեանի մասին գրուած է, որ ան անշարժ գոյքով զբաղուող «Տաշիր Կրուփ»-ի ղեկավարն է, որուն կը պատկանի 24 առեւտուրի կեդրոն, 7 գրասենեակային շէնք եւ 7 հիւրանոց, ծնած է Հայաստան եւ 1990-ականներուն տեղափոխուած է Ռուսաստան:

Հայագրի միլիարատէր, «Լինսի» հիմնադրամի ղեկավար 95-ամեայ Քըրք Քրքորեան 3.3 միլիարով Forbes-ի ցուցակին վրայ 412-րդն է:

Ցուցակին վրայ է նաեւ Արժանթինահայ Էտուարտո Էռնեկեան, որ 1.8 միլիար տոլար կարողութեամբ աշխարհի 831-րդ ամենէն հարուստ մարդն է: Ան Եւրոպայի եւ Լատինական Ամերիկայի մէջ 49 օդանաւակայաններու տէր է, Արժանթինի փոստային ծառայութիւնը կը պատկանի իրեն եւ հազարաւոր հեկտարներու վրայ կ'արտադրէ գինի եւ ձիթապտուղ: Յաջորդական չորրորդ տարին ըլլալով աշխարհի ամենահա-



Գործարար Սամուէլ Կարապետեան

րուստ մարդը կը նկատուի Քարլոս Սլիմ Մեքսիքայէն՝ 73 միլիար տոլար ունեցուածքով:

Սլիմին կը յաջորդէ Microsoft-ի հիմնադիր Պիլ Կէյթսը. 67 միլիար կարողութեամբ ան առաջինն է Միացեալ Նահանգներու մէջ:

Երրորդ դիրքի վրայ է Սպանական «Zara» ընկերութեան սեփականատէր Ամանսիօ Օրթեկա: Ան մեծ հարստութիւն կուտակած է վերջին մէկ տարուայ ընթացքին՝ գրեթէ 20 միլիար տոլար եւ իր 57 միլիար կարողութեամբ առաջինն է Սպանիոյ մէջ:

ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐՈՒ ԶԵՐԹԱԿԱՆ ԶԵԿՈՅՑԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Փետրուար 18-ի տեղի ունեցած Հայաստանի նախագահական ընտրութիւններու կապակցութեամբ ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատութիւններու եւ մարդու իրաւունքներու գրասենեակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) հրապարակեց իր հերթական՝ միջանկեալ զեկոյցը, որ աւելի խիստ է քան նախնական գնահատականը, որ տրուած էր ընտրութիւններէն անմիջապէս ետք:

Ըստ նոր զեկոյցի, պաշտօնական արդիւնքներու վերլուծութիւնը ցոյց կու տայ, որ կապ կայ որոշ ընտրատեղամասերու մասնակցութեան բարձր ցուցանիշի եւ գործող նախագահի ստացած ձայներու մեծ քանակին միջեւ, ինչ որ մտահոգութիւն կը յառաջացնէ ընտրական ամբողջ գործընթացի նկատմամբ:

«1988 ընտրատեղամասերէն 1746-ին մէջ արձանագրուած է աւելի քան 300 ընտրող: 144 տեղա-

մասերու մէջ մասնակցութիւնը գերազանցած է 80 տոկոսը, ինչ որ անհավանական բարձր թիւ է: 155 ընտրատեղամասերու մէջ գործող նախագահը ստացած է ձայներու աւելի քան 80 տոկոսը», - մասնաւորապէս ըսուած է զեկոյցին մէջ:

Զեկոյցի համաձայն, կասկածի տեղի կու տայ նաեւ անվաւեր նկատուած քուէաթերթիկներու մեծ թիւը, որ որոշ ընտրատեղամասերու մէջ գերազանցած է օգտագործուած քուէաթերթիկներու ընդհանուր թիւի 20 տոկոսը:

«Ժառանգութիւն» կուսակցութեան մամուլի խօսնակ Յովսէփ Խուրշուդեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին ըսած է, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի այս զեկոյցը նախորդի համեմատ էական ճշգրտումներով է:

«Աւելի օբիեկտիւ գնահատական է՝ համեմատած նախորդի,

Շաբ.ը էջ 4

ՕՊԱՍԱՅԻ ԹԱՓԱՆՑԻԿ ԱԿՆԱՐԿՆԵՐԸ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

ՅԱԿՈՒԲԱԴԱԼԵԱՆ

Հայաստանի նախագահի աշխատակազմը տարածել է ԱՄՆ նախագահ Պարաք Օպամայի շնորհավորական ուղերձը Սերժ Սարգսեանին, որն իր մէջ պարունակում է բաւական հետաքրքրական ենթատեղեւորներ:

Նախ, Օպամայն յիշեցնում է Սերժ Սարգսեանին, որ երկուսով էլ սկսում են նախագահութեան երկրորդ ժամկէտը: Զուգահեռութեան այդ շնորհակցումը միգրացիոն ընդամենը փաստի պարզ, մարդկային, անմիջական արձանագրում է: Բայց դա շատ է յիշեցնում ամերիկեան կինոնկարներում յաճախակի պատահող յայտնի ժեստը՝ դիմացինին ակնդէտ հետեւելու մասին, ինչն էլ իր հերթին կարող է նշանակել ստանձնած կոնկրետ պարտաւորութիւնների կատարմանը ձեռնամուխ լինելու անհրաժեշտութեան ակնարկ:

Յաջորդ հետաքրքրական «ենթատեղեւոր» բաւական թափանցիկ ու բաց է՝ ամերիկեան ներդրողներն ակնկալում են ժողովրդավարական, տնտեսական բարեփոխումներ, որպէսզի ներդրում կատարեն արժէքաւոր գործընկերոջ երկրում: Այդ բաւական յստակ ակնարկն ըստ ամենայնի «թիրախաւորում»

կան ու քաղաքական հարցերի խորհրդակցանքների հետ միասին այցելութեան էր գնացել վարչապետ Տիգրան Սարգսեանին, ում նախորդ տարուայ Դեկտեմբերին հրաւիրեցին ԱՄՆ եւ բաւական ներկայանալի տնտեսական ու քաղաքական ընդունելութեան արժանացրին, հանդիպումներ կազմակերպեցին ՏՏ ոլորտի ամերիկեան հակառակ հետ, որոնք ցանկութիւն արտայայտեցին ներկայացուած լինել Հայաստանում: Այդպիսով թերեւս ցոյց տրուեց բաւական ակնառու կերպով, որ առկայ իրավիճակում ԱՄՆ հենց Տիգրան Սարգսեանին է տեսնում վարչապետի պաշտօնում:

Օպամայի ակնարկը՝ տնտեսական բարեփոխումների եւ ամերիկեան ներդրողների ակնկալիքներն մասին, հանդիսանում է ԱՄՆ այդ դիրքորոշման վերահաստատում, արդէն նախագահի մակարդակով, ինչը իր հերթին նշանակում է, որ Միացեալ Նահանգները Մոսկուայից պակաս տրամադրուած չէ վարչապետի պաշտօնի համար մրցակցութիւնում:

Թէեւ չի բացառում, որ Փոլիսի եւ Օպամայի հեռախոսազրոյցի ընթացքում ձեռք բերուած միջազգային որոշ պայմանաւորուածութիւններ նպաստեն կողմե-

ՄՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՍԵՐժ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

ՄԱՍ ՍԱՀԱԿԵԱՆ

Բաֆֆի Յովհաննիսեան-Գագիկ Ծառուկեան հանդիպումից յետոյ երկու թիմերը ակնյայտօրէն միմեանցից տարբերող յայտարարութիւններ տարածեցին:

Յիշեցնենք, որ Մարտի երկուսին Բաֆֆի Յովհաննիսեանի նախաձեռնութեամբ ԲՀԿ շտաբում կայացած աւելի քան երեք ժամանոց հանդիպման սկզբում փակ դռների հետեւում տեղի է ունեցել առանձնազրոյց, որից յետոյ պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել հանդիպումը շարունակել արդէն ընդլայնուած կազմով: Սակայն, եթէ ԲՀԿ-ի տարածած յայտարարութեամբ իրագրուել է, որ հանդիպում է եղել եւ քննարկուել յետընտրական իրավիճակը, յամենայնդէպս մանրամասների եւ գնահատականների մասին ոչ մի խօսք, ապա Բաֆֆի Յովհաննիսեանի շտաբի յայտարարութեան մէջ փակագծերն ամբողջութեամբ բացուած են: «Քննարկուեցին Փետրուարի 18-ին տեղի ունեցած նախագահական ընտրութիւնների արդիւնքում առաջացած քաղաքական ճգնաժամի հետ առնչուող խնդիրներ: Բաֆֆի Յովհաննիսեանը վերահաստատեց իր դիրքորոշումն առ այն, որ չի ընդունում ընտրութիւնների արդիւնքները, համարելով դրանք կեղծուած: Գագիկ Ծառուկեանը եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար մարմնի ներկայացուցիչները նշեցին, որ Հայաստանի քաղաքացիների բացարձակ իրաւունքն է պահանջել սեփական իրաւունքների, այդ թւում՝ ընտրական իրաւունքի յարգում: Նրանք նաեւ կիսեցին Բաֆֆի Յովհաննիսեանի եւ նրա շտաբի ներկայացուցիչների մտահոգութիւնները՝ երկրում ստեղծուած քաղաքական եւ սոցիալ-տնտեսական իրավիճակի անընդունելի լինելու եւ փոփոխութիւնների հրամայականի կապակցութեամբ՝ մասնաւորապէս ասուած է յայտարարութեան մէջ շարունակելով. «ԲՀԿ-ն եւս գտնում է, որ իւրաքանչիւր քայլի հանդիպող անարդարութիւնը, իշխանութեան տարբեր օղակների կողմից քաղաքացու արժանապատուութեան ոտնահարման՝ սովորական դարձած գործելաճիւղը, օրաւոր մեծացնում են հանրային դժգոհութիւնը: Գագիկ Ծառուկեանը վերահաստատեց իրենց դիրքորոշումը, համաձայն որի «Բարգաւաճ Հայաստան» եղել ու մշտապէս լինելու է ժողովրդի կողքին: Պայմանաւորուածութիւն ձեռք բերուեց համագործակցել ստեղծուած քաղաքական ճգնաժամը յաղթահարելու, այդ թւում արտահերթ լուծումներ առաջարկելու ուղղութեամբ»:

Չնայած ԲՀԿ-ն Փետրուարի 18-ի նախագահական ընտրութիւնների վերաբերեալ «գնահատական» է տուել՝ համարելով, որ այս ընտրութիւնները ոչնչով չեն տարբերուել նախորդներից, սակայն միաժամանակ դեռեւս խուսափում է Փետրուարի 18-ից յետոյ կոնկրետ գնահատական տալ՝ ճանաչում է Սերժ Սարգսեանի յաղթանակը, թէ՛ յաղթող է համարում Բաֆֆի Յովհաննիսեանին: Ուստի այս համատեքստում ԲՀԿ-ի վերաբերեալ «ժառանգութեան» յայտարարութիւնը բաւական ուշագրաւ է, սակայն միեւնոյն ժամանակ անհասկանալի: Փորձենք հասկա-

նալ՝ ի՞նչ «արտահերթ լուծումներ»-ի շուրջ է համաձայնութիւն ձեռք բերուել: Հաշուի առնելով, որ «ժառանգութեան» կողմից դեռեւս իշխանութեան հետ բանակցութիւնների սեղանին դրուած է բացառապէս արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ անցկացնելու հարցը, ապա ենթադրուում է, որ ԲՀԿ-ն նոյնպէս կողմ է Աժ արտահերթ ընտրութիւններին, ինչը փոքր-ինչ անտրամաբանական է: Վերջին խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում խորհրդարանում տեղերը կրկնապատկած ԲՀԿ-ն առանց լուրջ երաշխիքների չի կարող գնալ նման քայլի:

Իրականում ակնյայտ է, որ Գագիկ Ծառուկեանն այս հանդիպումով մի քանի նպատակ է հետապնդում՝ ժողովրդին ցոյց տալ, որ ԲՀԿ-ն շարունակում է մնալ ազդեցիկ քաղաքական ուժ, համագործակցում է ընդդիմութեան հետ: Անհերքելի է, որ նախագահական ընտրութիւններին ԲՀԿ-ն Սերժ Սարգսեանին «կիսապաշտպանութեան» շնորհիւ վստահութեան կորուստ է ունեցել եւ այժմ ճիշդ ժամանակն է դա վերականգնել՝ Բաֆֆի Յովհաննիսեանի միջոցով:

Բացի դրանից ԲՀԿ-ն իր կշիռը փորձում է բարձրացնել ՀՀԿ մօտ՝ Սերժ Սարգսեանին սպառնալով, որ եթէ չկիսուել իշխանութիւնը, ապա ԲՀԿ-ն կարող է իշխանութեան բերել ժառանգութեանը: Իսկ «ժառանգութիւն» էլ իր հերթին է սպառնում Սերժ Սարգսեանին, հասկացնելով, որ եթէ զիջումների չգնայ, ապա ԲՀԿ-ի հետ միասին երեւանու աւագանու ընտրութիւններին «կը գրաւեն» Երեւանը, որը ըստ հույսերի հանրապետութեան կէսն է:

«ՀԱՅԵԼԻ»

Օպամայի ակնարկը՝ տնտեսական բարեփոխումների եւ ամերիկեան ներդրողների ակնկալիքների մասին, հանդիսանում է ԱՄՆ այդ դիրքորոշման վերահաստատում, արդէն նախագահի մակարդակով, ինչը իր հերթին նշանակում է, որ Միացեալ Նահանգները Մոսկուայից պակաս տրամադրուած չէ վարչապետի պաշտօնի համար մրցակցութիւնում

է վարչապետի պաշտօնը, որի համար ԱՄՆ եւ Ռուսաստանը կարծես թէ բաւական թէ՛ պայքար են սկսել:

Սերժ Սարգսեանը Մարտի 12-ին մեկնելու է Մոսկուա, որտեղ հաւանաբար բաւական լուրջ կը դրուի Հայաստանի վարչապետի պաշտօնի հարցը: Մոսկուան արդէն իսկ սկսել է հոգեբանական լուրջ ճնշումը Հայաստանի վրայ: Մարտի մէկի տարելիցի խորհրդանշական օրը Մոսկուայից տեղեկութիւն է ստացում, որ դեսանտային ուժերը անհրաժեշտութեան դէպքում կարող են գալ եւ Հայաստանում ճգնաժամ հանգուցալուծել: Փորձալ առումով Հայաստանն իհարկէ պէտք է կանչի, որ դան, բայց ինչպէս յայտնի է, իրական ուժիմում Ռուսաստանն այդ կանչին չի սպասում եւ կարող է կամ գալ ու ճգնաժամ ստեղծել, կամ ճգնաժամ ստեղծել՝ ու գալ:

Իսկ մինչ այդ, Հայաստան է եկել Գագիկ Յովհաննիսեանի փոխնախագահ, Հայաստանի մայրաքաղաքի քաղաքապետի պաշտօնը Ռուսաստանում աշխատանքի հետ փոխած Հայրուստակարգի նախկին ղեկավար Կարէն Կարապետեանը, ով համարում է վարչապետութեան Մոսկուայի թեկնածուն:

Երբ հայկական մամուլի տեղեկութիւններով Կարէն Կարապետեանը Երեւանում հանդիպումներ էր ունենում քաղաքական տարբեր շրջանակների հետ, Հայաստանում ԱՄՆ դեսպան Զոն Հեֆերը դեսպանատան տնտեսա-

րի «գօտեմարտը» Հայաստանեան տիրոջութում թուլացնելուն: Իհարկէ, երկու նախագահների հեռախոսազրոյցի ընթացքում Հայաստանի վարչապետի պաշտօնի հարցի քննարկում պատկերացնելը ծիծաղելի է, բայց ընդհանուր մթնոլորտը, որ կարող է այս կամ այն կերպ ձեւաւորուել գրոյցի արդիւնքում կամ հետեւանքով, անշուշտ կարող է նաեւ այդ հարցի վրայ ունենալ որոշակի եւ նոյնիսկ վճռորոշ ազդեցութիւն:

Եւ Պարաք Օպամայի ուղերձի թերեւս ամենաուշագրաւ «ենթատեղեւոր» ԱՄՆ նախագահը Սերժ Սարգսեանին յիշեցնում է իր «ժառանգութեան» ստեղծման մասին: Հայաստանի նախագահի ընտրութեան պաշտօնական արդիւնքի եւ յետընտրական զարգացումների ֆոնին, բառի ընտրութիւնն իսկապէս հետաքրքիր է: Ամենայն հաւանականութեամբ, դա պարզապէս յետընտրական նոր ստատուս քուոյի ճանաչման անուղղակի ակտ է՝ բառախաղի միջոցով, եւ նաեւ անուղղակի ու թափանցիկ ակնարկ-յորդոր Սերժ Սարգսեանին՝ ճանաչել այդ ստատուս-քուոն որպէս երկրորդ ժամկէտի ամբողջական պաշտօնավարման երաշխիք:

Ի դէպ, դա եւս հետաքրքիր ակնարկ է, Հայաստանի կայուն զարգացման տեսանկիւնից, Մոսկուայից ստացուած դեսանտաճգնաժամային յայտարարութիւնների համատեքստում:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՏՈՒՄԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ՀՆՁՍԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
 MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ ԱՄՆ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ԱՌՋԵԻ



Բողոքի ցույց Երևանի մէջ Ամերիկայի դեսպանատան առջև

Մի խումբ քաղաքացիական ակտիվիստներ Մարտի 4-ին, բողոքի ակցիա են անցկացրել Հայաստանում Միացեալ Նահանգների դեսպանատան առջև՝ բողոքելով ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի կողմից Սերժ Սարգսեանին շնորհաւորելու փաստի դէմ:

Ակցիայի մասնակիցները Դուք մեզ խնդրեցիք հաւատալ, բայց չփոխուեցիք, Ձեր նախագահը Հայաստանի ժողովրդից պէտք է հարցնի, թէ ում շնորհաւորել եւ անգլերէն այլ պատասխաններ են պահել: Նրանք նշել են, թէ ԱՄՆ-ը, լինելով ժողովրդավարական երկիր, իրաւունք չունի լեզուի-

մացնել չյաղթած թեկնածուին՝ նախագահ Օբամայի բերանով շնորհաւորելով նրան:

Ըստ ակցիայի մասնակիցների, Օբաման եւ այլ երկրների առաջնորդները իրաւունք չունեն շնորհաւորելու, քանի դեռ չի լրացել նախագահի թեկնածուների՝ ընտրութիւնների արդիւնքները վիճարկելու հայցով Սահմանադրական դատարան դիմելու վերջնաժամկէտը: Իսկ այն աւարտուած է այսօր: Ակցիայի մասնակիցները նաեւ Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնին ուղղուած նամակ են պատրաստել, որը յանձնել են դեսպանատան աշխատակիցներից մէկին:

«ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ» ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈԽՅԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԳԱԼ»

Բնականաբար զիջումների պէտք է գնալ ընդդիմութեան եւ հասարակութեան հետ: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց ԶՀԿ խմբակցութեան պատգամաւոր նՏաճատ Վարդապետեանը, յաւելելով, որ նկատի ունի կրքերի թուլացումը:

«Փոխհամաձայնութիւն կարող է լինել նաեւ կոալիցիա կազմելու միջոցով այդ թւում «Ժառանգութեան» հետ», - ասաց նա: Հարցին, թէ իր կարծիքով, իշխանութեան մէջ կա՞ն «յոզնած դէմքեր», որոնք պէտք է հրաժարական տան, Վարդապետեանը պատասխանեց, որ չի կարող այդ հարցին պատասխանել, քանի որ

չգիտի, թէ ով է յոզնած կամ գերյոզնած: Խորհրդարանի լուծարումն էլ, ըստ նրա, Սահմանադրութեանը հակասող պահանջ է եւ այսօր դա ոչալ չէ:

Նա յիշեցրեց, որ «Ժառանգութիւնը» «Ազատ դեմոկրատների» հետ մեկտեղ հազիւ յաղթահարեց խորհրդարան մտնելու շեմը, հետեւաբար խորհրդարանը լուծարելու նրանց պահանջը չի հասկանում:

Ինչ վերաբերում է Գազիկ Ծառուկեանի եւ Բաֆֆի Յովհաննիսեանի հանդիպմանը, ԶՀԿ խմբակցութեան պատգամաւորը կարծիք չայտնեց, որ այդ հանդիպումը միտուած է եղել կրքերի թուլացմանը:

ԱԳՆ-Ի ՇԷՆՔԻ ԱՃՈՒՐԴՆ ԶԿԱՅԱՑԱԻ ԱՅՆ ԿՐ ՎԱՃԱՌՈՒԻ «ՏԱՆԳՕ»-ԻՆ



Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան շէնքի Հանրապետութեան հրապարակիմ վրայ

Հայաստանի արտգործնախարարութեան շէնքի Մարտ 5-ին նշանակուած աճուրդը չկայացաւ՝ գնորդի բացակայութեան պատճառով:

Հաշուի առնելով այդ հանգամանքը, որոշուեց շէնքը վաճառել «Տանգօ» ընկերութեանը, որի հետ նախնական պայմանագիր էր կնքուել:

Նախնական պայմանագրով «Տանգօ» ընկերութիւնը, որը, ըստ շրջանառուող տեղեկութիւնների, պատկանում է արգենտինացի մեծահարուստ էդուարդօ Էռնեկեանին, կառավարութեան թիւ 2 մասնաշէնքի համար պէտք է վճարի 51 միլիոն 270 հազար 840 դոլարին

ԻՆՉ Է ԱՌԱՋԱՐԿԵԼ ՅՈՎԻԿ ԱՐԱՅԱՍԵԱՆԸ ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻՆ

Հայաստանի խորհրդարանի խօսնակ Յովիկ Աբրահամեանը համաձայն չէ, որ Աժ խմբակցութիւնների հետ սկսուած խորհրդակցութիւնները ձախողուել են, ինչպէս նշել են «Ժառանգութեան» անդամները:

«Ես համարում եմ, որ քննարկումներն աւարտուած չեն, առաւել եւս՝ ձախողուած չեն», - Մարտի 5-ին, Եռաբլուրում յայտարարել է Յովիկ Աբրահամեանը, յաւելելով, որ իրենք բազմիցս են ասել, որ ցանկացած պահի պատրաստ են նստել սեղանի շուրջ եւ շարունակել քննարկումները:

Նա ընդգծել է, որ Աժ-ի լուծարումը հակասահմանադրական է եւ, բացառութեամբ այս հարցի, իրենք պատրաստ են բարձրացուած միւս հարցերի շուրջ քննարկել կամ բանակցել:

Յովիկ Աբրահամեանը յայտարարել է նաեւ, որ առաջարկել է Բաֆֆի Յովհաննիսեանի գլխաւորութեամբ ստեղծել սահմանադրական բարեփոխումների յանձնաժողով, որտեղ կը քննարկուեն բոլոր քաղաքական ուժերի առաջարկութիւնները:

ԲՀԿ-Ն ԿՈՂՄ Է ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ, ԲԱՅՑ՝ ՊԱՅՄԱՆՈՎ

ԲՀԿ-ն կողմ է արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ անցկացնելուն, բայց՝ հետեւեալ պայմանով. «Յանկարծ ոեւէ մէկի մտքով չանցնի, թէ ԲՀԿ-ն վախենում է արտահերթ որեւէ ընտրութիւնից: Բայց եթէ ընտրական օրէնքը չի փոխուելու, եթէ 41 մեծամասնական մանդատն ի սկզբանէ մնալու է իշխանութեան գրպանում, արտահերթ որեւէ ընտրութիւն որեւէ պատկեր չի փոխելու: Երբ կը լինեն ԸՕ-ի փոփոխութիւններ, այդ ժամանակ մենք որեւէ արտահերթ ընտրութեան հետ կապուած որեւէ խնդիր չունենք», - Aravot.am-ի հետ

զրոյցում ասել է ԲՀԿ խմբակցութեան քարտուղար Նաիրա Ջոհրաբեանը:

«Տիկին Ջոհրաբեանի գնահատմամբ՝ Աժ նախագահի հետ քննարկումներն այն տոնայնութեամբ են գնացել, որ կարելի է փաստել, որ դրանք, ըստ էութեան, տապալուել են. «Այո, փոխհամաձայնութիւն ձեռք չբերուեց, բայց ես կարծում եմ, որ պէտք է մէկ անգամ եւս փորձել շարունակել քննարկումները՝ համատեղ օրակարգ ձեւաւորելու ուղղութեամբ: Այլ ճանապարհ ԲՀԿ-ն չի տեսնում», - գրում է «Առաւօտ» թերթ:

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ՀԵՏ

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանի նախաձեռնութեամբ, ԲՀԿ կենտրոնական գրասենեակում հանդիպում է տեղի ունեցել ԲՀԿ նախագահ Գազիկ Ծառուկեանի հետ: Այս մասին NEWS.am-ին յայտնեցին ԲՀԿ մամուլի ծառայութիւնից: Հանդիպման սկզբում՝ փակ դռների ետեւում, տեղի է ունեցել առանձնազրոյց, որից յետոյ պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել հանդիպումը շարունակել արդէն ընդլայնուած կազմով:

«ՍԵՒ ԷՋՈ ԳՐԵՑ ՌՈՒԲԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԸ»

«Մարտի մէկի հիմնական սեւ էջը գրեց Ռոբերդ Քոչարեանը», - համոզուած է «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան ղեկավար Պետրոս Մակէեանը:

2008թ. Մարտի մէկի ողբերգական իրադարձութիւնների մեղաւորները մինչ օրս բացայայտուած չեն, քանի որ, ըստ Պետրոս Մակէեանի, իշխանութիւնները քաղաքական կամք չունեն:

«Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան ղեկավարը վստահ է, որ ո՛չ Մարտի 1-ի, ո՛չ Հոկտեմբերի 27-ի արիւնալի դէպքերը չեն բացայայտուի այնքան ժամանակ, քանի դեռ իշխանութիւնը «գործող ուժի մի ձեւում է»:

«Մեր երկրում իրաւական պատուերով՝ կայ պատուէր, որ պէտք է բացայայտել, ուրեմն կը բացայայտեն: Եթէ պատուէր կայ, համարժէք դրամ:

Անցած տարեկներ շին Հայաստանի կառավարութիւնը որոշում էր ընդունել, հաշուի առնելով հասարակական դժգոհութիւնը, արտգործնախարարութեան շէնքը վաճառել ոչ թէ ուղղակի վաճառքի ձեւով, այլ՝ աճուրդով:

որ չպէտք է բացայայտուի, ուրեմն՝ չի բացայայտուի», - կարծում է պարոն Մակէեանը:

Պետրոս Մակէեանը, յետընտրական ներկայիս իրավիճակն ու հասարակութեան ակտիվութիւնը, համեմատելով 2008թ. նախագահական ընտրութիւններից յետոյ ստեղծուած իրավիճակի հետ, ասում է, որ նոր Մարտի մէկ այսօր հնարաւոր է միայն տեսականօրէն. «Իշխանութիւնները հասկանում են, որ դեռ մէկը չմարսած՝ երկրորդ քայլ անելն իրենց համար ինքնառնչւած մանր ուրոշում կը լինի: Գործնականում այդ հնարաւոր չէ»:

Ինչ վերաբերում է Բաֆֆի Յովհաննիսեանի պայքարին միանալուն, «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութիւնը ողջունում է «Ժառանգութեան» առաջնորդի պայքարը ժողովրդի հետ եւ յայտնում է իր աջակցութիւնն ու մասնակցութիւնը:

ԼՈՒՐԵՐ

«ԵԹԷ ԿԱՐԴԱՆՔ ՕԲԱՄԱՅԻ ԱՄԲՈՂՋ ՌԻՂԵՐՁԸ, ԴԱ ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ ՉԷ»-. Ռ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Որպես ԱՄՆ քաղաքացի՝ Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրէն Ռիչարդ Կիրակոսեանը հիասթափուած է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի ուղերձից՝ ուղղուած Սերժ Սարգսեանին: Այս մասին նա ասաց Մարտի 5-ին, լրագրողների հետ համադրաման ժամանակ:

«Եթէ կարդանք Օբամայի ամբողջ ուղերձը, դա ամբողջութեամբ շնորհաւորանք է նախագահ Սերժ Սարգսեանին, այդտեղ չի շեղուած է այս ընտրութիւններում եղած ինդիքները: Նախագահ Օբաման տեղեակ էլ էլ էր, որ նման նամակ ուղարկուել է, այլ կերպ ասած՝ Մոզամբիկի նախագահն էլ է նման նամակ ստանում»,- նշեց նա:

Ռիչարդ Կիրակոսեանը շեշտեց, որ մենք մեծ խնդիր ունենք լուծելու եւ պէտք է յոգնած լինենք՝ սպասելով, թէ ինչ է ասում նախագահ Պուտինը կամ նախագահ Օբաման, իսկ Հայաստանի ժողովրդավարութիւնն էլ պէտք է համեմատենք հայկական ստանդարտների հետ:

Բարեփոխումների եւ փոփոխութիւնների հասարակական պահանջները զօրեղ են, ստատուս քոռն այլեւս ընդունելի չէ՝ լինեն դրանք օլիգարխների, բնապահպանների, արդիւնաբերական ոլորտի հետ կապուած ինդիքների հետ, ասաց Կիրակոսեանը՝ շեշտելով, որ իշխանութիւնները պէտք է հասկանան, որ պէտք է աւելի հաշուետու լինեն, ընդդիմութիւնը եւս պէտք է հաշուետու լինի:

«Սակայն այն որոշումները, որոնք ընդունուած են այսօր, կ'ազդեն հետագայ սերունդների վրայ: Նոյնիսկ այս ընտրութիւնների ընթացքում չկար մեծ քննարկում կարեւորագոյն հարցերի վերաբերեալ: Իւրաքանչիւր հայի համար սա վերաւորական քարոզարշաւ էր, բանավէճ չտեսանք թեկնածուների միջեւ, ոմանք որոշեցին որպէս քարոզարշաւ ընտրել հացադուլը, որոշները յայտարարեցին, որ միեւնոյն է՝ չեն ընդունելու ընտրութիւնների արդիւնքները, եթէ նոյնիսկ իրենք ընտրուեն, սա



Ռիչարդ Կիրակոսեան

անձերի միջեւ պայքար էր, ոչ թէ գաղափարների»,- նշեց նա:

Յետընտրական ստեղծուած իրավիճակից Ռիչարդ Կիրակոսեանը երկու հնարաւոր սցենար է կանխատեսում: Առաջինն այն է, երբ մղումն է նախաձեռնութիւնը ընդդիմութեան կողմն է, եւ ճնշումն իշխանութիւնների վրայ կը շարունակուի, սակայն սա հնարաւորութիւն է նաեւ նախագահ Սարգսեանի համար: «Նախագահ Սարգսեանն իր երկրորդ կառավարման շրջանում դարձել է վերջին մոհիկանը, դարաբաղեան էլիտայի վերջին ներկայացուցիչը եւ քաղաքական փոփոխութիւնը սկսուել է՝ սերնդային, դեմոկրատիկ, գաղափարական առումով: Յաջորդ քաղաքական էլիտան, որը եկել է ոչ Լեւոնային Ղարաբաղից, անպայման էլ, որ լինի աւելի լաւը եւ աւելի ժողովրդավար»,- նշեց նա:

Երկրորդ սցենարը, Ռիչարդ Կիրակոսեանի խօսքով, այն է, որ Րաֆֆի Յովհաննիսեանը հանդէս է գալիս որպէս փոփոխութիւնների միջնորդ: Նա շեշտեց, որ թէ իշխանութիւնները, թէ ընդդիմութիւնը կանգնած են յստակ ռազմավարութիւն ներկայացնելու մարտահրաւէրի առջեւ եւ երկրորդ բանը, որ նմանեցնում է նրանց, այն է, որ երկուսն էլ ունեն մէկ ընդհանուր թշնամի՝ օլիգարխները:

ԵՐԵՒԱՆ - ՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՉՈՒԵՐԹԸ ՆԱԽԱՏԵՍԻՈՒՄ Է ԱՊՐԻԼԻ 3-ԻՆ

Հայաստանի աւիացիոն իշխանութիւնները օրերս պաշտօնական թոյլատուութիւն են տուել Երեւան-Վան չուերթեր իրականացնելու համար: Նման չուերթեր իրականացնելու խնդրանքով ՀՀ կառավարութեանն առընթեր Քաղաքացիական աւիացիայի գլխաւոր վարչութեանը դիմել էր «Նարեկաւանք Տուր» ընկերութիւնը: Ընկերութեան տնօրէն Աշոտ Սողոմոնեանը «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրեց, որ նախքան Հայաստանի իշխանութիւններին դիմելը իրենց թուրք գործընկերները նման թուրքներ իրականացնելու թոյլտուութիւն են ստացել Թուրքիայի իշխանութիւններից:

«Նախատեսուած է շաբաթական երկու չուերթ՝ Չորեքշաբթի եւ Կիրակի օրերին», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում մանրամասնեց Աշոտ Սողոմոնեանը: - «Նախնական՝ առաջիկայ ամիսների համար, արժէքը կը լինի 200 դոլարին համարժէք

դրամ, յետոյ կարող է փոփոխուել՝ դեռ չգիտենք, թէ ինչպէս կը լինի»:

Չուերթերը կ'իրականացնի թուրքական Borajet աւիաընկերութիւնը: Սողոմոնեանն ասաց, որ մինչ թուրքական ընկերութեանը դիմելը իրենք Երեւան-Վան աւիաչուերթեր իրականացնելու առաջարկով դիմել են հայկական «Արմաւիա» ընկերութեանը, սակայն կոմերցիոն պատճառներից ելնելով՝ որոշուել է, որ թուրքները պէտք է իրականացնի թուրքական ընկերութիւնը:

Նման չուերթ ստեղծելու հիմնական նպատակը դէպի Արեւմտեան Հայաստան հայ զբօսաշրջիկների տեղափոխումը աւելի մատչելի դարձնելն է, սակայն հետագայում «Նարեկաւանք Տուրի» տնօրէնի խօսքով, իրենք յոյս ունեն, որ հոսք կը լինի նաեւ դէպի Հայաստան:

«Նարեկաւանք Տուր»-ին դէպի Վան չուերթներ իրականացնելու թոյլտուութիւն է տրուել մինչ

ԷՂՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԵԱՅԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՍԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԻՆ

Մարտի 3-ին Հայաստանի արտգործնախարար էղուարդ Նալբանդեանը Փարիզում հանդիպեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի, Ժակ Ֆորի, Եան Կելլիի, ինչպէս նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անջէլ Կասպրիզիկի հետ:

ԱԳՆ մամուլի ծառայութիւնից յայտնուած է, թէ քննարկուեցին արցախեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացին առնչուող հարցեր: Անդրադարձ կատարուեց վատահոլութեան ամրապնդմանն ուղղուած միջոցների վերաբերեալ եռանախագահների կողմից նախորդ հանդիպման ընթացքում արուած առաջարկին:

Պայմանաւորուածութիւն ձեռք բերուեց համանախագահների՝ առաջիկայում տարածաշրջան կատարելիք այցի շուրջ:

էղուարդ Նալբանդեանը համանախագահների ուշադրութիւնը հրաւիրեց, որ Փարիզում կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների՝ համանախագահների հետ նախորդ երկու հանդիպումների ժամանակ համաձայնեցուած համատեղ մամուլի հաղոր-

դագրութիւնները ադրբեջանական կողմը ոչ միայն այդպէս էլ չհրապարակեց, այլեւ, արդէն բնորոշ դարձած ոճով, ներկայացրեց քննարկուած հարցերի հետ առնչութիւն չունեցող հաղորդագրութիւններ: Արդէն աւանդույթ է դարձել, երբ ադրբեջանական կողմը մերժում է եռանախագահների կողմից ներկայացուած առաջարկները եւ յետոյ մտահոգութիւն յայտնում բանակցային գործընթացի վերաբերեալ:

Նախարար Նալբանդեանը վերստին շնորհակալութիւն յայտնեց համանախագահներին՝ կարեւոր եւ հետեւողական միջնորդական առաքելութեան համար, որի վկայութիւնն են նաեւ եռանախագահ երկրների ղեկավարների կողմից լ'Ակ-վիլայում, Մուսկոկայում, Դովիլում եւ Լոս-Կաբոսում արուած համատեղ յայտարարութիւնները:

ԱԳ նախարարը վերահաստատեց, որ Հայաստանը համանախագահների հետ միասին շարունակելու է ջանքերն՝ ուղղուած Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորմանը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՔՈՒՈՂ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՆՈՒԱՋԵԼ Է ԱԲԵԼԻ ՔԱՆ 10 ԱՆԳԱՄ

Մարդասիրական օգնութեան կարգով 2013 թ. Յունուարին Հայաստանը ստացել է 248 տոննա բեռ՝ 1.6 մլն դոլար ընդհանուր արժէքով: Այդ մասին տեղեկացնում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայութիւնը:

Նախորդ տարուայ Յունուարի համեմատ մարդասիրական օգնութիւնը նուազել է մօտ 10 անգամ: Դա հիմնականում պայմանաւորուած է նրանով, որ այս տարի Չինաստանից

ավտոբուսներ չեն առաքուել (2012 թ. Յունուարին դրանց արժէքը գնահատուել է 11 մլն դոլար):

Սակայն, ընդհանուր առմամբ, Հայաստան առաքուող մարդասիրական օգնութեան ծաւալները տարեց տարի նուազում են: Այսպէս՝ 2013 թ. Յունուարին ԱՄՆ-ից առաքուել է ընդամէնը 337 հազ. դոլարի մարդասիրական օգնութիւն՝ 5 անգամ քիչ, քան նախորդ տարի Յունուարին:

ՍԱՅՍԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Շարունակուած էջ 1-էն

ալ մերժուած են իշխանութիւններու կամակատար Դատարանին կողմէ:

«Քանի որ կան բոլոր իրաւական հիմքերը եւ Րաֆֆի Յովհաննիսեանն էլ յայտարարել է, որ նա իրաւական ճանապարհով է պայքարելու, քաղաքական ճանապարհին գուզորդուող ուղի է սա: Սա չի փոխարինում քաղաքական պայքարին, բնականաբար, բայց սա նաեւ հնարաւորութիւն է Սահմանադրական Դատարանի համար

որպէս ինստիտուտի՝ կայանալու, եւ նաեւ Սահմանադրական Դատարանի անդամների համար, որպէսզի մաքրեն իրենց վրայից այն նախորդ անգամների լեզիտիմացումը կեղծուած ընտրութիւնները, որը իրենց վրայ մինչեւ օրս մնացել է», - պատասխանեց Յովսէփ Խուրշուդեան:

Միւս կողմէ Րաֆֆի Յովհաննիսեան կը շարունակէ իր հանրահաւաքները, Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ, ինչպէս նաեւ այցելութիւնները Հայաստանի տարբեր քաղաքներն ու շրջանները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐՈՒ ԶԵԿՈՅՑԸ

Շարունակուած էջ 1-էն

եւ իրօք նշուած է, որ այնպիսի մտահոգութիւններ, ինչպիսին է մասնակցութեան բարձր ցուցանիշներ, անհաւանական բարձր՝ ինչպէս իրենց մօտ նշուած է, ապահովուած տեղամասերում նաեւ Սերժ Սարգսեանի՝ գործող նախագահի բարձր ցուցանիշը», - ըսած է Խուրշուդեան՝ շարունակելով. - «Ըստ էութեան, մենք դա էլ հենց

ասում էինք, որ հենց այսպիսի տեղամասերի հաշուին է, իսկ իրենք նշում են, որ դրանք հարիւրաւորներ են, որ ապահովուել է ընտրութիւնների կեղծարարութիւնը»:

Ընդհանուր առմամբ գեկոյցին մէջ դարձեալ կը նշուի որ նշուի, որ Փետրուար 18-ի ընտրութիւնները լաւ կազմակերպուած են էին եւ ընտրութիւններու օրն ալ խաղաղ ու կազմակերպուած անցած է:

այս տարուայ Հոկտեմբեր, ինչից յետոյ էլ ընկերութիւնը կ'որոշի՝ շահութեաբեր են արդեօք չուերթները թէ ոչ եւ դրանք շարունակելու կամ դադարեցնելու որոշում

կը կայացնի: Այս ուղղութեամբ առաջին չուերթը հաւանաբար տեղի կ'ունենայ Ապրիլի 3-ին: Այն կը տեւի 40 րոպէ:

ՐԱՖՖԻՆ ԴԻՄԵՑ ՄԴ, ՀԱՍ ԷԼ ՇԱՆՍ ՏՈՒԵՑ ՄԴ-ԻՆ...

ՄԱՐԻԵՏԱ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Մի 10 օր էլ ՄԴ-ի պատասխանին կը սպասենք՝ զնայց...

Րաֆֆի Յովհաննիսեանն իր ներկայացուցիչներ՝ Յովսէփ Խուրշուդեանի, Զարուհի Փոստանջեանի եւ իրաւախորհրդատու՝ Կարէն Մեծլումեանի միջոցով դիմեց Սահմանադրական դատարան ոչ թէ մէկ, այլ միանգամից երկու պահանջով՝ նախագահական ընտրութիւնները վերաբերեալ ԿԸՀ արդիւնքներն անվաւեր ճանաչելու եւ արձանագրելու ընտրութիւնների իրական արդիւնքները, այն է՝ վաւեր ճանաչելու ժողովրդի յաղթանակը եւ Րաֆֆի Յովհաննիսեանի նախագահ ընտրուած լինելու փաստը: Այս մասին, դիմումը ՄԴ ներկայացնելուց յետոյ, լրագրողներին երէկ յայտնեցին Ր. Յովհաննիսեանի վերոնշեալ ներկայացուցիչները: Այդպիսի պահանջներ ներկայացնելու իրաւական հիմքեր, ըստ իրաւաբան Կարէն Մեծլումեանի, առկայ են, յամենայն դէպս այդպէս են գտնուած հայցը ներկայացնողները: Հիմքերը ներկայացուած են 11 էջի վրայ, ըստ Մեծլումեանի՝ այնտեղ բազմաթիւ խախտումներ են նշուած, նաեւ նրանք, որ ԿԸՀ-ն այդպէս էլ մերժել էր «Ժառանգութեան» այն դիմումը քննելիս:

Բոլոր ընտրութիւններից յետոյ ՄԴ դիմող ընդդիմադիր թեկնածուները մերժուել են, այդ դէպքում «Ժառանգութիւն» ինչ յոյս ունի իր պահանջների չմերժման եւ արդեօք ձեւական բնոյթ չի՞ կրում ՄԴ դիմելը: Րաֆֆի Յովհաննիսեանի մամուլ խօսնակ Յովսէփ Խուրշուդեանի պատասխանը հետեւեալ բովանդակութիւնն ունէր. քանի որ կան բոլոր իրաւական հիմքերը՝ Րաֆֆի Յովհաննիսեանը իրաւական ճանապարհով է պայքարելու նաեւ, սա քաղաքական պայքարին գուցորդուող ուղի է՝ իհարկէ չփոխարինելով քաղաքական պայքարին, ու Ր. Յովհաննիսեանն, այսպիսով, շանս է ստեղծում ՄԴ-ի կայանալու, նաեւ ՄԴ անդամների ու ՄԴ նախագահի համար, որ իրենց վրայից մաքրեն այն նախորդ անգամները կեղծուած ընտրութիւնների լեգիտիմացումը: Տեսնենք, թէ ՄԴ-ն ինչպէ՞ս է օգտագործելու Րաֆֆուն իրեն ստուած շանսը:

Իսկ ՀՀԿ-ական շրջանակներից հնչած այն տեսակէտը, թէ ՄԴ-ի կողմից դիմումի քննութեան 10 օրը միգուցէ դադարեցուեն հան-

րահաւաքները, Խուրշուդեանն ընդունելի համարեց՝ չէ, իրաւական պայքարը չի փոխարինելու քաղաքական պայքարին, այդ երկու ճանապարհներն ընթանալու են գուրգահեռ, իրաւական ճանապարհով էլ գնում են՝ մինչեւ որ երկրի ներսում իրաւական ճանապարհները կը սպառուեն:

Յ. Խուրշուդեանն անդրադարձաւ նաեւ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելութեան՝ ընտրութիւնների վերաբերեալ նոր միջանկեալ զեկոյցի գնահատականների խստանալուն, համոզուած, որ դա կապուած է օրէջօր ընտրութիւնների կեղծման վերաբերեալ նոր փաստերի ի յայտ գալու հետ եւ վիճակագրական վերլուծութիւնների արդիւնք է նաեւ: Դրանցից պարզ է դառնում, որ որքան մեծ է եղել մասնակցութիւնը քուէարկողների, այնքան բարձր է եղել Սերժ Սարգսեանի ստացած ձայների տոկոսը, իսկ որտեղ մասնակցութեան աւելի խելամիտ տոկոս է արձանագրուել, այնտեղ յաղթել է Րաֆֆի Յովհաննիսեանը:

ԲՀԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկեանի եւ նրա կուսակիցների հետ մէկ օր առաջ տեղի ունեցած Րաֆֆի Յովհաննիսեանի եւ նրա կողմնակիցների հանդիպման մասին հարցին ի պատասխան «Ժառանգութեան» մամուլ խօսնակը նշեց, որ դա կողմերի փոխադարձ ցանկութեամբ է եղել, եւ հակադարձեց այդ առթիւ սոցցանցերի քննադատութեանը. «Մենք աշխատում ենք բոլոր ուժերի հետ, Ր. Յովհաննիսեանը նոյնիսկ Ս. Սարգսեանին այցելեց եւ քննարկեց ստեղծուած քաղաքական իրավիճակից դուրս գալու ուղիները, եւ ես չեմ տեսնում պատճառներ, որոնց հիման վրայ պէտք է խուսափէինք Ազգային ժողովում թուով երկրորդ խմբակցութեան հետ նման կոնսուլտացիաներ անցկացնել», ասաց:

Ր. Յովհաննիսեանն այսօր Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանին եւ վարչապետ Տիգրան Սարգսեանին հրաւիրել է Ազատութեան հրապարակ, դա մի՞թէ իրատեսական հրաւեր է. «Սա հանրային հաշուետուութեան հրաւեր է, եւ ես կարծում եմ, որ ամէն երկրում նման հրաւերը կը չարգուի: Կը գան, թէ չեն գայ՝ կը տեսնենք վաղը», ասաց: Այսինքն՝ այսօր:

ՄԴ մամուլի ծառայութեան տարածած տեղեկութեամբ՝ Ր. Յովհաննիսեանը դիմել է ՄԴ՝ Սահմա-

Մար. ք էջ 6

ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՊԱՂԵՍԻՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երուսաղէմի Հայոց նորընտիր պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան, Փետրուարի 28ին, 2013, կրօնական եւ աշխարհական պատկառելի պատուիրապետութիւն մը գլխաւորելով այցելութիւն մը տուաւ Պաղեստինի պետութեան նախագահ Մահմուտ Ապպահին:

Ռամաւլլա քաղաքի իր նստավայրին մէջ Պաղեստինի պետութեան ղեկավարը՝ պաշտօնական արարողակարգով դիմաւորեց Հայոց Պատրիարքը: Այստեղ նախագահական հրամանագիր մը կարդացուեցաւ, որով վաւերական կը համարուէր Ս. Յակոբայ վանքի մէջ տեղի ունեցած պատրիարքական ընտրութիւնը եւ Նուրհան Արքեպիսկոպոս կը հաստատուէր Երուսաղէմի Հայոց Պատրիարք:

Ամենպ. Նուրհան Արք. իր եւ միաբանութեան անունով շնորհա-

կալութիւն յայտնեց նախագահ Ապպահին եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց պաղեստինեան պետութեան: Ան յոյս յայտնեց ի մօտոյ տեսնել Պաղեստինեան դրօշի ծածանումը Երուսաղէմի վրայ:

Պատասխանելով հանդէս եկաւ նախագահ Ապպահս եւ շնորհաւորելէ ետք Նուրհան սրբազանի պատրիարք ընտրուելն ու վաւերացման ենթարկուելը իր եւ Պաղեստինի Ազատագրութեան կոմիտէի, ինչպէս նաեւ գործադիր մարմնի անունով, բարօրութիւն մաղթեց Հայ բնակիչներուն եւ ըսաւ՝ անոնք անքակտելի մասնիկն են մեր հանրութեան ու կը վայելեն համահաւասար իրաւունքներ: Արդարեւ, ըսաւ նախագահ Ապպահս «Հայաստանի Հանրապետութիւնը առաջին պետութիւնն էր, որ ՄԱԿ-ի մէջ թիկունք կանգնեցաւ մեր արդար իրաւունքներուն»:

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԾՐԱԳՐԻՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՅՐԱՄԱԼԻՐ ՍՏԵՂԾԵԼ

Փարիզամերձ Սելը արուարձանում՝ Մէն գետի դիմաց վեր բարձրացող Մարքիզ դը Պոմպադուրի նախկին դղեակը, ուր այժմ գտնուած է Միխիթարեան միաբանութեան «Սամուէլ Մուրադեան» դպրոցը, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ վերածուելու է Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրի՝ միջազգային մակարդակով:

Յուշահամալիրը ընդգրկելու է թանգարան, մարդկութեան դէմ ոճրի հետազօտական կենտրոն, գրադարան, մեդիատեկ, որտեղ կը կազմակերպուեն գիտական, մշակութային ձեռնարկներ, ցուցահանդէսներ, թատերական ներկայացումներ, համերգներ:

Համալիրը կը հանդիսանայ հայ համայնքի հանդիպումների եւ հաւաքոյթների վայր՝ յարմարաւէտ ու մեծ սրահներով, գրախանութիւններով եւ նոյնիսկ յուշանուէրների խանութիւններով:

«Սելը - 2015» կոչուող այս ծրագրի հիմնաքարը խորհրդանշական կերպով կը դրուի 2015 թուականի Ապրիլի 24-ին:

Դեռ երբ տարի առաջ «Սամուէլ Մուրադեան» դպրոցի տնօրէն հայր Յարութիւն Պատրիկեանը ընդլայնել է Սելըի դպրոցի գործունէութիւնը: Օ-դը-Սէնի շրջանային խորհրդի նախագահ, «Սամուէլ Մուրադեան» դպրոցի շրջանաւարտ Պատրիկ Դեւեջեանը իր

կողմից առաջարկել է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ հայկական յիշողութեան համալիր ստեղծել նոյն այդ վայրում՝ վստահեցնելով, որ կ'օժանդակի այդ ծրագրին:

Յարութիւն Պատրիկեանի փոխանցմամբ, ծրագիրն իրականացնելու համար արդէն ձեւաւորուել է չորս հոգուց բաղկացած յանձնախումբ, որը ստեղծելու է հիմնադրամ: Այս հիմնադրամում, իր հերթին, ընդգրկուած կը լինեն ինչպէս հայեր, այնպէս էլ հայերին համակողմ ֆրանսիացիներ:

Այս գործում ընդգրկուել է Ֆրանսիայում Հայաստանի դեսպանատունը՝ դեսպան Վիգէն Չիտեզեանի մասնակցութեամբ: Իր օգնութիւնն է խոստացել նաեւ Երեւանի Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոնեանը:


Հայր Յարութիւն Պատրիկեանը սկսել է հանդիպումներ իշխանութիւնների հետ: Նա «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց, որ հանդիպել է շրջանի տարբեր քաղաքապետների հետ, այդ թւում՝ Սելըի, «բոլորն էլ խանդավառուեցին այս գաղափարով»:

Նրա վկայութեամբ՝ ակնկալուած է Սելըի յուշահամալիրը դարձնել ցեղասպանութեան ամե-

Մար. ք էջ 6


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403b
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաժողտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՍԱՐԳԻՍ ՍԵՐՈՒԲԵԱՆ. «ՅՐԱՆԴ ՏԻՆՔԸ ԱՆՓՈՒԱՐԻՆԵԼԻ Է»



Վերջերս Լիբանան կը գտնուէր Պոլսոյ «Ակօս» թերթի հայերէն բաժնի պատասխանատու խմբագիր Սարգիս Սերոբեանը: Ան Հայ կաթողիկէ Մեարոպեան վարժարանին մէջ հանդէս եկաւ զեկոյցով՝ «Ակօս թերթը եւ թաքուն հայերու երեւոյթը» խորագրին տակ: Սերոբեան, լիբանանահայ գաղութի կառուցներուն տրուած այցելութիւններու ծիրէն ներս նաեւ հիւրընկալուեցաւ «Արարատ»-ի խմբագրատան մէջ, ուր հանդիպում ունեցաւ խմբագրական կազմին եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի վարիչ Մարմինի պատուիրակութեան հետ, գլխաւորութեամբ վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Ալեքսան Քէօզկէրեանի: Մօտ մէկ ժամ տեւած հանդիպումին ընթացքին Սերոբեան ներկայացուց պոլսահայ համայնքը, անոր կառուցները, մտահոգութիւնները, գրական ու ազգային կեանքը: «Ակօս»-ի հայերէն բաժնի պատասխանատու խմբագիրն հետ «Արարատ» ունեցաւ հետեւեալ հարցազրոյցը.

Յ. Որքանով ազդեցիկ է Յրանդ Տինքի բացակայութիւնը՝ «Ակօս»-ի խմբագրատունը:

Պ. Բացակայութիւնը անշուշտ կը զգանք: Տինքի սպանութենէն շաբաթ մը ետք հրապարակային սպահանդէս մը կազմակերպեցին եւ այնտեղ պահանջեցին, որ բեմ բարձրանամ ու խօսիմ:

Որեւէ ուղերձ չէի պատրաստած: Արդէն տակաւին սպանութեան ցնցումէն չէինք փրկուած: Երկար խօսելիք չունէի: Զգացումներս չկրցայ զսպել: Միայն ըսի. «Հարիւր հազարներով» Բոլորս Հրանդ ենք» բացազանչեցինք: Երանի թէ այդ ճիշդ ըլլար: Երանի բոլորս Հրանդներ ըլլալինք: Երանի միայն երկու իսկական Հրանդ ըլլար: Այդ պարագային կեանքը այլ ընթացք պիտի ունենար»: Երկու Հրանդ չունինք: Հրանդը մէկ էր եւ մինչեւ այսօր Հրանդը անփոխարինելի է: Անոր նման քաղաքագէտ, դիւանագէտ եւ մարդ համոզելը գիտցող չկայ: Օտարները լաւ իմացան, որ ան լաւ մարդ

համոզել գիտէր: Իր վրայ յարձակելու պատրաստուած Տրապզոնի երիտասարդներուն երբ գնաց խօսելու, նոյնիսկ իր թուրք ընկերները խրատեցին չեթալ: Հրանդ այնտեղ գնաց եւ խօսեցաւ: Իր վրայ յարձակող երիտասարդութիւնը հաւաքոյթի աւարտին իր ձեռքը սեղմեց: Հրանդը այսպիսի մարդ էր: Յ. Տինքի սպանութեան դատավարութեան նոր հանգրուանները որեւէ յոյս կը ցերձնէ:

Պ. Այս օրէնքներով տեղ չենք հասնիր: Օրէնքները չեն փոխուած: 1980-ականներուն այդ գինուորականներուն մշակած նոյն ֆաշիստական օրէնքները կը շարունակուին: 301-րդ յօդուածը կայ ու կը մնայ: Չեն կրցած փոխել: Դատարան մը կամ վճռաբեկ ատեն մը ոչինչ պիտի փոխեն: Արդէն մեր իրաւաբանները այդ ուղղութեամբ դիմում չեն ներկայացուցած, այլ մեր կատարած դիմումը թերութիւններուն եւ դատավարութեան սխալներուն մասին է: Օրինակ՝ քամերաներու նկարահանած տե-

սագրութիւնները կորսուած են, ոստիկանութիւնը կորսնցուցած է: Դատարանը չէ պրպտած այդ հարցը: Մարդասպանին զէնքը ոստիկանութեան կողմէ տակաւին չստուգուած, Տրապզոնի ոստիկանութիւնը արդէն ստուգած է թէ ուրիշ եկած է զէնքը:

Հետեւաբար, վճիռը պէտք է բողոքարկուի եւ այդպէս պատահած է: Սակայն նոյն օրէնքներով, նոյն դատաւորներով, չեմ կարծէր թէ տարբեր արդիւնքի կրնանք հասնիլ:

Յ. Աշխատանք կը տարուի Թուրքիոյ սահմանադրութիւնը փոխելու: Այս առումով լաւատե՞ս էք:

Պ. Բոլորը կ'ըսեն, թէ սահմանադրութիւնը պէտք է փոխուի, սակայն իւրաքանչիւրը իր յօդուածը կ'առաջարկէ: Սահմանադրութիւնը ո՞վ պիտի յանդգնի փոխել: Եթէ իսկական ժողովրդավարական սահմանադրութիւն մշակուի, այդ բարեփոխողները յետագային պատիժներ պէտք է կրեն, անցեալին իրենց կատարած խախտումներուն համար:

Յ. Պոլսոյ Սամաթիա թաղամասի տարեց հայ կիները վերջին շրջանին կ'ենթարկուին յարձակումներու եւ բռնութեան: Արդեօք այս ալիքը մաս կը կազմէ սովորական գողութեան երեւոյթի՞ թէ հայերու դէմ ճնշումներու քաղաքականութեան:

Պ. Ոստիկանութիւնը մեզի կանչեց եւ բացատրութիւններ տուաւ: Մեզի տեղեկութիւններ փոխանցեց, որ թերթով տպենք: Սակայն մեր պահանջած տուեալները չկային: Տակաւին կը փնտռենք տուեալները: Ըսին, որ հաւանաբար գողութեան նպատակով եղած դէպքեր են, խոստացան բացայայտել մանրամասնութիւնները:

Սկիզբը փորձեցինք հաւատալ, որ հակահայկական բուրմունքներ չկան, սակայն աւելի ուշ ոստիկանութեան փոխանցեցինք, որ

կասկածներ ունինք: Հասարակ, պարզ յանցագործ մը տակաւին չէ գտնուած: Հիւանդանոցներուն մէջ քննութիւններ կատարած են: Բժիշկները ըսած են, որ հոգեկան հիւանդի մը գործը պէտք է ըլլայ: Շրջանի հիւանդանոցներու եւ հոգեբանական բաժիններուն մէջ հաւանական յանցագործներ փնտռած են: Նոյնիսկ հիւանդապահները ծանօթացած են ոստիկանութեան հրապարակած դիմագիրներին: Բոլորը կը լսեն այս մասին: Սակայն ոստիկանութիւնը տակաւին չէ գտած ոճրագործը եւ այդ ժխտական կէտ մըն է, որ կ'արձանագրուի պետութեան եւ ոստիկանութեան հաշուոյն: Տարեց մարդիկը այժմ կը վախնան առանձին դուրս գալ Սամաթիոյ շրջանին մէջ:

Յ. Ի՞նչ է պոլսահայ համայնքին դիրքորոշումը՝ Ցեղասպանութեան 100 ամեակի սեմին: Ստահոգուա՞ծ էք հաւանական բռնութիւնները:

Պ. Յարձակումներու ենթարկուելու հաւանական է: Բայց այդ մեր ձեռքը չէ բնականաբար: Եթէ աշխարհի ամէն կողմ Ցեղասպանութեան նուիրուած միջոցառումներ պիտի ըլլան, Պոլսոյ մէջ եւս պիտի կազմակերպուին: Նախապէս Ապրիլ 24-ի ցոյցեր

Պոլսոյ, Անգարայի եւ Իզմիրի մէջ կազմակերպուեցան: Թուրքերը եւս կը ձեռնարկեն այդպիսի միջոցառումներ: Թուրքերուն մէջ եւս կան ժողովրդավարութեան հաւատացող մարդիկ: Թաքսիմի մէջ մեծաթիւ թուրքեր հաւաքուեցան: Այս տարի եւս պիտի մասնակցինք այդ ցոյցերուն: Այդ մեր սուգն է: Ոչ մէկը կրնայ արգիլել մեզի, մեր պապերուն կրած տանջանքներուն համար սուգ պահել, նոյնիսկ թուրք պետութիւնը: Իմ սուգս կը սգամ եւ 100 ամեակը կարեւոր առիթ է: Բացի, եթէ Սամաթիոյ տարեց կիներուն նման մեզի սպանել փորձեն:

ՐԱՖՅԻՆ ԴԻՄԵՑ ՍԴ

Շարունակուած էջ 5-էն

նադրութեան 100-րդ յօդուածի 3.1 կէտի եւ 101-րդ յօդուածի 9-րդ կէտի հիմքերով, իրաւունք ունենալով վիճարկել ՀՀ նախագահ ընտրուելու մասին ԿԸՀ Փետրուարի 25-ի թիւ 62-Ա որոշումը: Ըստ ՄԳ մամուլի ծառայութեան դի-

մումի՝ նախնական ուսումնասիրութիւնը դիմումի գրանցումից 24 ժամուայ ընթացքում պէտք է տեղի ունենայ, ապա այդ ժամկէտից յետոյ աշխատակարգային նիստում քննութեան առնի գործը՝ քննութեան ընդունելու հարցը: Իսկ դիմումի քննութիւնը պէտք է տեղի ունենայ 10-օրեայ ժամկէտում:

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԾՐԱԳՐՈՒՄ Է

Շարունակուած էջ 5-էն

նամեծ համալիրը եւ մշակութային կենտրոնը Սփիւռքում:

Կենտրոնի ֆինանսաւորմանը, բացի ֆրանսիական կառավարութիւնից եւ Եւրոպական միութիւնից, պէտք է մասնակցի նաեւ վատիկանը, որը իր ներկայացուցչին ուղարկել էր Փարիզ՝ «Սեւր - 2015» ծրագրի շուրջ խորհրդակցելու համար:

«Վատիկանն էլ խանդավառ է

այս գաղափարով, եւ շատ կարեւոր է վատիկանի նեցուկը, որովհետեւ գիտենք, որ կաթոլիկները տասնեակ համալսարաններ ունեն աշխարհի չորս կողմը՝ Ամերիկայից մինչեւ Լիբանան, այդ համալսարանների պրոֆեսորները, դասախօսները կարող են իրենց գրութիւններով պաշտպանել Հայ դատարանը եւ ցեղասպանութեան դատապարտումը», - «Ազատութիւն» ռադիոկայանի փոխանցեց հայր Յարութիւն Պատրիկեանը:

Day Trip To
Santa Barbara & Solvang

On Saturday
March 16, 2013

We will be headed to Catchuma Lake to have a barbeque lunch, then visit Solvang & Downtown Santa Barbara

Departure Times & Locations
7:30 a.m. – 1060 N. Allen Ave., Pasadena
8:00 a.m. – 300 N. Glendale Ave., Glendale

PLUS TWO SURPRISE VISITS! **\$50.00 Per Person**

For information, please contact Lena at 626-485-6434 or Karine at 818-324-0574

ՈՂՋՈՅՆ՝ ԴԲԸՍ-Ի ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ

ՏՕԲՓ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Հայկական Բարեգործական Միութեան հովանաւորութեան ներքոյ գործող Ասպետներու Շարժումը ծնունդ առած է թուականէս տասը տարիներ առաջ, 2002-ին, հարաւային Գալիֆորնիոյ մէջ: Կարգ մը տեսլապաշտ երիտասարդներու կողմէ նախաձեռնուած այս նոր շարժումը, սկզբնական սեղմ շրջանակի մէջ իր բարեկամական հաճելի հանդիպումներու առընթեր, շուտով ծանօթութիւն սկսաւ գտնել ու գնահատուիլ Լոս Անճելոսի հայ համայնքի կողմէ:

Ան հրապարակ սկսած է իջնել յանդուզն հրապարակային ձեռնարկներով: Այդ ձեռնարկները ընդհանրապէս կը բնութագրուին ազ-

նուան կարսիա նուագախումբն ու Հէթպիթ Տի- ձէյը վառ կը պահէր տօնական մթնոլորտը հանդիսասրահէն ներս:

Ասպետներու Շարժման վարչութեան Փոխ Ատենապետ Պրն. Գրիգոր Երեւանեան, իր Բարի Գայլուտի, ներկայութեան համար շնորհակալական եւ ուրախ ժամանակ անցնելու կապակցութեամբ մաղթանքի համառօտակի խանդավառիչ խօսքի աւարտին՝ բարձրախօս հրաւիրեց Համանուն վարչութեան Ատենապետ Պր. Տիրան ձէրէճեանը: Ան պատշաճ ժամանակի սահմաններուն մէջ անդրադարձաւ Ասպետներու Շարժումի կազմաւորման հանգրուաններուն, առաքելութեան եւ արձանագրած տասնամեայ վաստակին մասին: Պրն.



Ասպետները՝ լրագրող Հասան ձեմալի, Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի եւ Տօֆ. Բամիւա Սթէյնըրի հետ (Մարտ 2011-UCLA)



Ասպետներու Շարժումը կազմակերպուած էր Երեւանի մէջ (2012) թագրեց իր գլխավորութիւնով: Անցնող տասը տարիներու ընթացքին Ասպետներու Շարժումը, իր հրապարակային բեմը բարձրացուց հայ, թուրք եւ ամերիկացի դասախօսներ, պատմաբաններ, որոնք, ընդհանրապէս իրենց քննարկման նիւթը վերցուցած կ'ըլլան հայ ժողովուրդը յուզող հիմնահարցեր, ինչպիսին եւ հայոց դէմ իրագործուած Յեղասպանութիւնը: Հայ-թուրք յարաբերութիւններու խնդրայարոյց իրավիճակը: Հայ-ազերի մօտեցումները: Հայաստանի եւ Արցախի դիմագրաւած այժմեական խնդիրները, ապահովական պայմաններու անկիւններէն դիտուած: Արդարեւ՝ ծաղկուն տասնամեայ վաստակ մը, որ պիտի արժանանար Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի գնահատական ու օրհնութեան կոնդակին::

Ասպետներու Շարժման 10-ամեակի տօնակատարութեան ճաշկերոյթը տեղի ունեցաւ Շաբաթ, Մարտ 2, 2013-ին, Մարինա Տէյ Բէյ պերճաշուք Պանդոկի շքեղ հանդիսասրահէն ներս առկայ, տօնական իւրաքանչեւ մթնոլորտի մէջ: Ներկայ էին տակաւ ընդարձակուող Շարժման անդամներ, զայն գնահատող մասնակիցներ եւ մամլոյ ներկայացուցիչներ: Ձերեմ էր տիրող մթնոլորտը, որ կը բուրեց հարազատութիւն, ընկերասիրութիւն եւ անմիջականութիւն: Մինչ,

ձէրէճեան, մեկնաբանելով համանուն Շարժման առաքելութիւնը, դիտել տուաւ՝ թէ Ասպետներու Շարժումը անվերապահօրէն զօրավիզ կը կանգնի հայը՝ հայ պահելու եւ հայ նոր ուսումնական սերունդը միութենական կեանքին կապելու համագրային ճիգերուն՝ կարենալ ապահովելու համար մեր ապագայ առաջնորդները, ղեկավարները: Ան զօրավիզ կը կանգնի հայ ժողովուրդի դէմ իրագործուած Յեղասպանութեան ճանաչման եւ հատուցման ազգային պահանջատիրութեան: Զօրավիզ կը կանգնի սահմանադրական եւ ժողովրդավարական կառոյցներու առաւել զարգացման, մեր հայրենիք՝ հայաստան Աշխարհէն եւ հերոսական Արցախէն ներս:

Պրն. Ատենապետի ելոյթին յաջորդեցին նորագիր ասպետներու անդամակցութեան արարողութեան:

Շաբ.ը էջ 19

UCLA-Ի ՆԱՐԵԿԱՅԻ ԱՆՈՒԱՆ ԶԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՍԲԻՈՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՆ ՓՐՈՖ. ՌԻՉՐԻՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ՆԱՐԵԿԱՅԻ ԱՆՈՒԱՆ ՇՔԱՆՇԱՆԻՆ

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի պիտի արժանանայ 2013 թուականի Նարեկացիի անուան շքանշանին իր անգնահատելի նուաճումներուն համար: Պաշտօնապէս պարգեւը իրեն պիտի յանձնուի UCLA-ի Նարեկացիի անուան Հայագիտական Ամբիոնի Բարեկամներ Միութեան կողմէ, Շաբաթ, 16 Մարտին, հանդիսաւոր ճաշկերոյթին, որը տեղի պիտի ունենայ Իրանահայ Միութեան Մշակութային Կեդրոնի սրահին մէջ, Կլէնտէյլ, Քալիֆորնիա:


Նարեկացիի անուան շքանշանը Փրոֆ. Յովհաննիսեանին կը շնորհուի առ ի ճանաչումն իր արտակարգ գիտական նուաճումներուն, ինչպէս նաեւ որպէս Հայկական Յեղասպանութեան հետազոտութեան մէջ ունեցած ներդրումին եւ ուրացումի դէմ կատարած իր հսկայական դերին համար:

UCLA-ի Նարեկացիի անուան Հայագիտական Ուսմանց ամպիոնի Նախագահ՝ Փրոֆ. Փիթըր Քաուրի կ'ըսէ. «Կարելի չէ երեւակայել վերջին տասնամեակներու հայկական գիտահետազոտական դաշտը առանց Դոկտ. Յովհաննիսեանի ակնառու ներդրումին: Կարեւոր հանգամանք մը, որ բնորոշ է Դոկտ. Յովհաննիսեանին, իր գիտական ուսումնասիրութեանց կողքին ցուցաբերած հասարակական աշխուժ գործունէութիւնն է. ան ոչ միայն բեղուն ուսուցչապետ մըն է, այլեւ պատմաբան, գիրքերու հեղինակ, բայց նոյնքան աննկուն պաշտպան արտոյեան մը քաղաքացիական եւ մարդկային իրաւանց»:

Այժմ արդէն պատուական Փրոֆեսոր, Յովհաննիսեան 50 երկար տարիներ դասախօսած է UCLA-էն ներս: Ան առաջին վարիչն էր համալսարանի Արդի Հայ Պատմութեան Հայ Կրթական Հաստատութեան Ամպիոնի, զոր ինք գլխավորեց 1987-էն մինչեւ 2011-ին հանգստեան կոչուելը: Այդ թուականէն ի վեր Ամբիոնը վերանուանուեցաւ Ռիչըրտ Յովհաննիսեանի անունով:

Փրոֆ. Յովհաննիսեան հեղինակած է քանի մը վճռորոշ գիրքեր արդի հայ պատմութեան մասին, ներառեալ չորս հատորանոց «Հայաստանի Հանրապետութիւնը» շարքը: Ան UCLA-էն ներս կազմակերպեց «Հայաստանի Պատմական Քաղաքներն ու Նահանգները» գիտաժողովներու շարքը, զոր մեկնարկեց 1990-ին: Նշեալ գիտաժողովներուն նիւթերը խմբագրուած ու հրատարակուած են Յովհաննիսեանի կողմէ եւ կը ներկայանան որպէս վաւերագրական անգնահատելի աղբիւրներ Պատմական եւ Արեւմտեան Հայաստանի մասին:

Իր ասպարէզի ամբողջ ընթացքին Փրոֆ. Յովհաննիսեան Հայ ժողովուրդի պատմութեան եւ Հայոց Յեղասպանութեան նիւթերով դասախօսած է աւելի քան 40 երկիրներու մէջ եւ մօտ 500 համալսարաններէ, թանգարաններէ եւ այլ հաստատութիւններէ ներս: Ի յաւելումն UCLA-էն ներս իր դասախօսական աշխատանքին, ան որպէս ականաւոր այցելու դասախօս ծառայութիւններ մատուցած է շարք մը ամերիկեան համալսարաններու, ներառեալ Պըրքլիի եւ Չեփմէնի (UC Berkeley and Chapman University) համալսարանները: 2010-ին ան UCLA-ի Ուսանողական



Մարմինն կողմէ ընտրուած է որպէս Տարուան Ամէնէն Ոգեշնչող Դասախօսը:

1893 Օգոստոսին, Լազօ իր տիկնոջ Օլինկայի եւ ընկերոջ՝ Մոզպետի (Մելքոն Ասիլբեկեան) հետ կը տեղափոխուին Թաւրիզ եւ կարճ շրջան մը կ'իջեանեն Ատրպետի ընդարձակ տունը: Այդ մասին Ատրպետ կը գրէ. «Դեռ երկու ամիս էլ չէր անցել, որ Թաւրիզ եկան իմ սիրելի ընկերները Լազօն եւ կինը Օլինկան, որոնց ընկերակցել էր Մելքոն Ասիլբեկեանը, Թաւրիզի Կարս թաղում ուսուցչութեամբ պարապելու: Լազօն այնպիսի մի ընկերանդ կուսակցական է, որ մինչեւ մահը հնչակեան գաղափարից չի անջատուել, նոյնպէս կինը Օլինկան: Ջերմ հնչակեան է նոյնպէս Ասիլբեկեանը, որ մինչեւ օրս շարքերում եռանդուն գործիչ է: Գրեթէ մի ամիս ինձ մօտ ապրեցան մինչեւ տուն վարձեցինք, իսկ նրանից յետոյ, ամբողջ տարին միասին էինք գործում, օր չէր անցնում որ իրար տուն չչաճախէինք կամ որեւէ գիշեր առանց ժողովի չէինք կարող ապրել» (2):

Այդ ժողովներուն որպէս արդիւնք, Թաւրիզի Հնչակեան մասնաճիւղը (կազմուած 1891-ին) նոր թափ կը ստանայ: Մասնաճիւղի առաջին գործերէն կ'ըլլայ ամուր եւ վստահելի կապ ստեղծել վանի հետ: Այդ կապին ստեղծումէն ետք Թաւրիզի ընկերներուն նիւթական զոհողութիւններուն եւ աշխատանքին շնորհիւ թրքահայաստան կ'անցնին (կամ կը փորձեն անցնել) Արթուրի (Օհանջանեան), Մոզպե-



տի, Մարտիկի (Մարուխանեան), Նազարէթ Լուսիկեանի, Յուրակ Սարկաւազի եւ այլոց ֆետայական խումբերը:

Որոշ ժամանակ անց Լազօ կը տեղափոխուի Ռաշտ, ուր ուսուցչութեան կողքին կը շարունակէ տանիլ կուսակցական կազմակերպչական գործունէութիւն: 1896 Սեպտեմբերին, Փարիզի մէջ կը մասնակցի Հնչակեան Կուսակցութեան Ա. Համագումարին, որպէս պատգամաւոր Պարսկաստանի (Թաւրիզ, Արտապիլ, Ղազուին, Ռաշտ) եւ Թիֆլիսի մասնաճիւղերուն (3):

Համագումարին, Լազօ կը դիրքորոշուի «Վերակազմեալ» շարժման դէմ: Համագումարէն ծնած Կեդրոնական վարչութիւնը իր Ա. նիստին մէջ Լազօն կը նշանակէ Պարսկաստանի շրջանի լիազօր ներկայացուցիչ (4):

Կը հաստատուի Թիֆլիս ու կը շարունակէ իր կուսակցական հասարակական գործունէութիւնը: Կ'աշխատակցի «Մշակ», «Խաթաբալա», «Աղբիւր» թերթերուն: 1903-ին հայ եկեղեցապատկան գոյքերու բռնագրաւման ցարական որոշման դէմ ընդդիմութեան եւ Թիֆլիսի մէջ Կովկասի փոխ արքայ իշխան Գոլիցինի դէմ կատարուած ահաբեկչութեան պատճառով, Հնչակեան Կուսակցութիւնը կը դառնայ ցարիզմի խիստ եւ ուղղակի հալածանքին ենթակայ: Կուսակցական կեանքը Թիֆլիսի մէջ կը կաղայ: Կարիքը կը զգացուի նոր, ժամանակակից եւ նշանակովի վարչութեան մը ստեղծման (բազմամարդ ժողովներ կատարելը դարձած էր անհնար): Այդ գործը իր վրայ կը վերցնէ հնչակեան յայտնի գործիչ, այդ շրջանին Ռիկայի համալսարանէն տակաւին նորաւարտ Վահան Մարսեան (Ղուկասեան): Ան, այս նպատակին համար կ'ունենայ խորհրդակցութիւններ, որոնց ընթացքին կը պարզէ, թէ հնչակեան բանուորական շրջանակները վերապահ են Լազօյի թեկնածութեան, զայն նկատելով «ազգայնական թեքումներ ունեցող եւ դասակարգային պայքարով չհետաքրքրուող մէկը»: «Դա ինձ եւս յայտնի էր, - կը գրէ Վ. Մարսեան ու կ'աւելցնէ. - բաց նկատի ունենալով, որ տաճկահայ բանուորները որոշ մասը սիրում էր Լազօյին եւ նա նրանց շրջանում մեծ հեղինակութիւն էր վայելում...» (5), Լազօ կը շարունակէ իր վարչական պարտաւորութիւնները: Ան,

գործիչի հանգամանքով կ'այցելէ Պաթում եւ Սեւ ծովու այլ քաղաքներ: 1905 Սեպտեմբերին Փարիզի մէջ կը մասնակցի ՄԴՀԿ Ե. Համագումարին:

Ժողովը կը քննարկէ կուսակցութեան նոր ծրագրին նախագիծը, որուն համաձայն կուսակցութիւնը պէտք է բաժնուէր երկու ինքնուրոյն բաժիններու. Անդրկովկասի եւ Ռուսաստանի մասնաճիւղերը պէտք է նուիրուէին միայն սոցիալիստական պայքարին, ընդհուպ անոնց վերջնական միացումը Ռ.Ս.Դ.Բ.Կ.ին: Իսկ հայկական հարցի հետապնդումը պէտք է ըլլար միայն արեւմտահայութեան հարցը: Համագումարի ընթացքին այս տեսակէտը կը պաշտպանէին կուսակցութեան մէջ այնպիսի հեղինակաւոր դէմքեր, ինչպիսիք էին Աւետիս Նազարբեկեան, Ռուբէն Խանազատ, Հրահատ-Կամսար (Գրիգոր Վարդանեան), Ահրիման (Սարգիս Քալաշեան), եւ այլն: Նոր նախագիծին հակադրուողները կ'ուզէին պահել կուսակցութեան մէկ-կուսիւնն ու միասնականութիւնը՝ գործող ծրագրին հեռաւոր եւ մօտաւոր նպատակներուն հիման վրայ: «Հակառակ հոսանքի գաղափարախօսը Լազօն էր» (6), կը գրէ Ռ. Խանազատ իր յուշերուն մէջ: Գրիգոր Եղիկեան, քիչ մը ընդարձակելով Ռ. Խանազատի այս հաստատումը, կը գրէ թէ Ե. Համագումարին Կուսակցութիւնը միասնական պահելու կողմնակիցներու «գլխին կանգնած էին Թուրքիայի գրեթէ բոլոր մասնաճիւղերի վստահութիւնը եւ կուսակցութեան բոլոր շրջաններում մեծ ժողովրդակալութիւն վայելող Արամը (Աչք-պաշեան) եւ Պարսկաստանում եւ Սեւ ծովի ափերում ժողովրդակալութիւն վայելող Յակոբ Ղազարեանը, երկուսն էլ թէեւ ոչ այնքան պատրաստուած, ինչպէս իրենց դէմ պայքարողները, բայց աւելի փորձառու նրանցից» (7):

Համագումարը, ձայներու նուազագոյն տարբերութեամբ, կը պահէ Կուսակցութեան միասնակալութիւնը: Համագումարէն ետք, նոր նախագիծի հեղինակները կուսակցութեան մէջ կը փորձեն հերձուած ստեղծել: Անոնք իրենց տեսակէտները պաշտպանող յայտարարութեամբ մը կը դիմեն շարքին ու այդ կապակցութեամբ կը սկսին քարոզութիւն կատարել: Լազօ կ'ըլլայ այդ շարժման դէմ հակադրուող կարեւոր գործիչներէն մէկը: Ան իր հակաքարոզչութիւնը կը սկսի, երբ տակաւին կը գտնուէր Եւրոպա: Օրինակի համար, համագումարէն անմիջապէս ետք, ան որպէս «Կովկասեան պատգամաւոր եւ շրջիկ լիազօր Կեդրոնական վարչութեան» ներկայ կ'ըլլայ Ռուսաստանի Շումլա քաղաքի ՄԴՀԿ վարչութեան ժողովին: «Վարչութիւնս մի բանախօսութիւն կազմած լինելով տեղույս ազգային դպրոցի դահլիճում, հրաւիրեց ընկեր Լազօյին մի ատենախօսութեամբ բացատրել ներկայ հայկական շարժումները: Ընկեր Լազօն ընդունելով մեր առաջարկը, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ մանրամասն բացատրեց յեղափոխական շարժումները, պատմական բոլոր մանրամասնութիւններով, կանգ առնելով Հնչակեան

Կուսակցութեան անցեալ եւ ներկայ գործունէութեան վրայ, բացատրեց ծրագիրն ու անցեալ եւ ներկայ դակղիկան» (8):

Դարձեալ համագումարէն անմիջապէս ետք, երբ Ռ. Խանազատ եւ Գ. Վարդանեան ծովու ճամբով կը հասնին Պաթում, քարոզչութեան նպատակով փախաք կը յայտնեն հանդիպիլ հնչակեան շարքին հետ, սակայն, անոնք իրենց դէմ կը գտնեն դիրքորոշուած եւ նախատրամադրուած շարք մը, որովհետեւ մինչ այդ Լազօն անցած էր այդ տեղէն: Լազօ քարոզչական իր այս աշխատանքը կը շարունակէ Թիֆլիսի, Պաթուի եւ այլ վայրերում մէջ՝ խափանելով ՄԴՀԿ-ը ՌՍԴԲԿ-ի մէջ լուծարելու փորձը: 1905 Փետրուարին Պաթուէն կայծ կ'առնէ հայ-թաթարական բախումները, որոնք կը տարածուին ամբողջ Անդրկովկասի վրայ:

Թիֆլիսի մէջ, որպէս «գլխուորական խորհուրդի անդամ, Լազօ կը ղեկավարէ հայաբնակ թաղամասերու՝ յատկապէս Սոլոլակ փողոցի պաշտպանութեան նուիրուած հնչակեան զինեալ խումբերը: 1905-ին տեղի կ'ունենայ նաեւ Ռուսական Ա. Յեղափոխութիւնը, որուն ճնշումէն ետք, գլուխ կը բարձրացնեն միապետական-անարխիստական «սեւհարիւրակալիները»:

Ասոնց սանձարձակ գործունէութիւնը ամենուր խառնակչութիւն յառաջ կը բերէ: Հնչակեան խումբերը ստիպուած կ'ըլլան պայքարելու նաեւ այս երեւոյթներուն դէմ: Այդ շրջանին, Թիֆլիսի քաղաքական եւ ապահովական վիճակին մասին գրութիւններով Լազօ, Լ. Լազեան գրչանունով կ'աշխատակցի Թիֆլիսի «Արշալոյս» օրաթերթին, որոնք կ'արտատպուին արտասահմանի հնչակեան մամուլին կողմէ: Այդօրինակ յօդուածի մը մէջ, ներկայացնելէ ետք «Սեւհարիւրակալիներուն» սանձարձակութիւններն ու անոնց հակադրուող հնչակեան պահակախումբերը, Լազօ կ'եզրակացնէ. «Խիստ պատասխանատուութեան կ'ենթարկուին ոչ միայն նրանք, որ կողպատներ են արեւ, այլեւ նրանք, որ կը գնեն կողպատուած իրերը եւ նրանք, որ իմանալով կողպատուած իրերի տեղը, անմիջապէս չեն յայտնի հնչակեան խուզարկու խմբին կամ զինուորական խորհուրդին» (9):

1906 Մարտ-Ապրիլ ամիսներուն, երբ փորձ կ'ըլլայ հայ-թաթարական բախումներուն կրօնական դիմագիծ տալ, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը կը հրատարակէ Լազօյի գրչին պատկանող քրտերէն լեզուով երկու հրատարակութիւններ, որոնք իրենց դրական ազդեցութիւնը կ'ունենան քիւրտ զանգուածին վրայ: Քանի մը ամիս յետոյ Լազօ կը տեղափոխուի Պաթում եւ կազմակերպչական միեւնոյն աշխատանքները կը տանի նաեւ հոն (10): «Եղաւ ժամանակ մը, որ Պաթումի հնչակեան բանուոր ընկերներու թիւը հասաւ 3000-ի: Պաթումի մասնաճիւղին յաճախ այցելութեան կ'երթար ընկ. Յակոբ Ղազարեանը, մեր շատ սիրուած ու յարգուած մտաւորական»

ՅԱԿՈՒ ՂԱԶԱՐԵԱՆ (ԼԱԶՕ)

Շարունակուած էջ 14-էն

ներէն, որու մասին արժէ որ առանձին յօդուածով մը արտայայտուինք» (11): Լազօ որոշ շրջան մը կը հաստատուի Պաթում ու կ'աշխատի Մանթաշեանի նաւթարդիւնաբերական ընկերութեան մէջ: Ազգային քաղաքական եւ հրապարակագրական գործունէութեան կողքին, Լազօ կը զբաղի նաեւ գրականութեամբ: Ան լաւապէս կ'ըմբռնէ հայ եւ քիւրտ ժողովուրդներուն բարեկամական յարաբերութիւններուն անհրաժեշտութիւնը երկու ժողովուրդներուն ճակատագրին համար: Յանկալի յարաբերութիւն մը, որ յաճախ կը խեղդուէր սփոթութեան եւ նախապաշարունակներու մէջ: Ուստի, Լազօ իր գրական աշխատանքներուն նպատակը կը դարձնէ այդ ծառայեցնել քիւրտ ժողովուրդի լուսաւորման:

Հայերէն եւ քրտերէն լեզուներով լոյս կը տեսնեն քիւրտ ժողովուրդի կենցաղը, սովորութիւնները եւ հայ-քիւրտ բարեկամութիւնը արտացոլող Լազօյի «Գուլէ» (1890), «Ֆերօ» (1892) պատմուածքները, «Խոնխոր» (1893) վէպը, «Եա Դաստ» (1904), «Թասիպ» (1899, Պայագիտցի ծածկանունով), «Քիւրտ ճամսի Պատմութիւնը» (1923) վիպակները: 1921-ին Լազօ կը կազմէ քրտերէն նոր այբուբեն ու կը հրատարակէ «Շամս» այբբենարանը, որ կ'ուսուցանուի Խորհ. Հայաստանի դպրոցներուն մէջ: Լազօյի ստեղծագործութեան հիման վրայ 1926-ին կը նկարահանուի «Ջարէ» ֆիլմը: Լազօ «քրտերէն լեզուով գրել է մի փոքր «Մատանին» խորագրով, ինչպէս եւ «Աղջկայ վարձքը» երկը» (12): Քիւրտ մտաւորական Հաճիէ ճնտին կը վկայէ, թէ «Լազօ մշակութային մեծ աշխատանք է կատարել քիւրտ ազգաբնակչութեան շրջանում» (13):

Համաշխարհային Ա. Պատերազմի եւ անոր յաջորդող տարիներուն, Լազօ ամբողջապէս կը նուիրուի հայ ժողովուրդի գլխուն պայթած իրերայաջորդ արհաւիրքները դարմանելու աշխատանքին:

1915 Ապրիլին, Թիֆլիսի մէջ կը մասնակցի ՄԴՀԿ Ռուսաստանի, Անդրկովկասի եւ Պարսկաստանի մասնաճիւղերուն (Թիֆլիս, Պաքու, Պաթում, Երեւան, Էջմիածին, Կարս, Աստրախան, Էնգելի, Շուրապեթ, Ղարաքիլիսա, Երզրանտապոլ, Թաւրիզ) խորհրդաժողովին, որպէս էնգելի մասնաճիւղի ներկայացուցիչ (14): Չորրորդ նիստին ետք Լազօ կը նախագահէ խորհրդաժողովը: Համաշխարհային Պատերազմը ստեղծած էր նոր իրավիճակ, որուն դիմաց Կեդր. Վարչութիւնը չէր կրնար մէկտեղուիլ: Ձերբակալուած Փարամազին փոխարինող վարչութեան փոխանգամ Բ. Սիւնիք (Բագրատ Աւետեան) կը գտնուէր Կովկաս, Ս. Սապահ Գիւլեան՝ Եգիպտոս (ապա ԱՄՆ), իսկ Բ. Վար ազդատ (Յակոբ Թիւրապեան)՝ Փարիզ: Նամակագրութիւնը պատերազմին պատճառով կ'ուշանար եւ կը գտնուէր խիստ հսկողութեան տակ: Համագումարի մասին մտածելն անգամ աւելորդ էր: Այս պատճառներով խորհրդաժողովը կ'ընտրէ ղեկավար մարմին մը, որպէսզի ան Կեդր. Վարչութեան լիազօրութիւններով վարէ գործերը: Երկարի (Արշակ Պապեան) եւ Ս. Տաշիրի (Սիւմն Նովեան) կողքին մարմնի անդամ կ'ընտրուի Լազօ: Կարճ ժամանակ մը անց այս մարմնին վրայ կ'աւելնայ Վահան

Մարսեան ու այդ որպէս Կեդր. Վարչութիւն կը գործէ մինչեւ 1924՝ կուսակցութեան Ը. Համագումարը:

Լազօ մաս կը կազմէ նաեւ Կեդր. Վարչութեան կից «գինուորական մարմին», որուն գլխաւոր պարտականութիւնն էր կազմակերպել կամաւորական աշխատանքները: Ան մեծ ներդրում կ'ուսնայ կամաւորական Ձ. գունդի կազմաւորման մէջ: Ինք եւս անձնապէս կը մասնակցի Ձ. գունդի գործունէութեան, կը գտնուի ճակատային առաջին գիծերուն վրայ, կ'ոգեւորէ կամաւորները եւ ակնատեսի վկայութեամբ ճակատային թարմ լուրերով կ'աշխատակցի Թիֆլիսի կուս. օրկան «Գաղափար»ին, որուն խմբագրական կազմին մաս կը կազմէր նաեւ ինք: Յաջորդող տարիներուն, Լազօ աշխոյժ մասնակցութիւն կը բերէ ազգային-քաղաքական կեանքին: 1916 Մայիսին, Փեթրոկոբատի մէջ Լազօ կը մասնակցի Հայկական Համագումարին եւ այդ մասին անմիջական թղթակցութիւններ ու վերլուծական յօդուածներ կը ստորագրէ «Գաղափար»ին մէջ: 1917 Մայիսին, Երեւանի մէջ կը մասնակցի Արեւմտասահայերու Ա. Համագումարին, ուր հնչակեան միւս պատգամաւորներուն հետ կը պաշտպանէ զօր. Անդրանիկին տեսակէտները: 1917-ի Ռուսական Փետրուարեան Յեղափոխութենէն ետք, ՄԴՀԿ-ը Ռուսաստանի տարածքին կը գործէ օրինական պայմաններու տակ եւ բացառապէս: Առաջին հերթին, անոր նախաձեռնութեամբ շատ մը քաղաքներու մէջ տեղի կ'ունենան ցարիզմի տապալումը ողջունող ժողովրդային հաւաքներ: Թիֆլիսի մէջ տեղի ունեցած այդպիսի հաւաքի մը ընթացքին, որուն գլխաւոր բանախօսը կ'ըլլայ Լազօ, ներկաները իրենց համամըտութիւնը կը յայտնեն հինգ կէտերէ բաղկացած պահանջագիրի մը, ուր կ'ըսուի. «1) Հաստատել խօսքի, մամուլի, ժողովի եւ միութիւնների լիակատար ազատութիւն, ինչպէս եւ բանուորական կազմակերպութիւնների, 2) Ազգային ինքնորոշում, 3) Կանանց իրաւահաստատութիւն, 4) Մահապատիժի վերացում, 5) Գումարումն Հիմնադիր ժողովի, ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի ընտրական իրաւունքի հիման վրայ, առանց սեռի խտրականութեան, ռամկավարական հանրապետութիւն հռչակելու համար» (15): Այս բանաձեւով արդէն իսկ կ'ուրուագծուէր նոր պայմաններու տակ ՄԴՀԿ-ի քաղաքական հաւատամբը: Եւ իրօք, նոյն տարուան Յունիսի Թիֆլիսի մէջ կայացած ՄԴՀԿ Ռուսաստանի, Անդրկովկասի եւ Պարսկաստանի մասնաճիւղերու խորհրդաժողովը, որուն Լազօ կը մասնակցէր Կեդր. Վարչութեան անդամի հանգամանքով, դէմ կ'արտայայտուի Լենինի գլխաւորած պոլշեիկեան քաղաքականութեան եւ իր համախոհութիւնը կը յայտնէ պուրժուա-դեմոկրատական վարչաձեւին (16): Լազօ կը դառնայ քաղաքական այս արեւելուծի հաւատացողն ու ջերմ պաշտպանը:

20-ին, զօր. Սմբատ (Բորոյեան) առաջարկ կը ներկայացնէ Ալեքսանտրապոլի հնչակեան վարչութեան, սպատամբութիւն բարձրացնել դաշնակցական իշխանութեան դէմ, եւ թէ ինք նման նախաձեռնութեան մը կը մասնակցի իր բազմաքանակ զինեալներով:

Այս լուրը կ'իմանայ Պաթում գտնուող հնչակեան գործիչ Տիգրան Գազանճեան, որ իր շուրջունէր փորձառու կուռղներու պատկառելի թիւ մը: Վերջինս կը փութայ Ալեքսանտրապոլ. նախ վարչութեան անդամներէն կը առուգէ լուրին ճշգրտութիւնը եւ ապա հանդիպումներ կ'ունենայ զօր. Սմբատի հետ: Տ. Գազանճեան կը հաստատէ, թէ զօր. Սմբատի առաջարկը լուրը չէր, պղպղակ էր եւ այդ առնուած էր պահուն ազդեցութեան տակ (զօր. Սմբատ այդ շրջանին տարակարծութիւններ ունէր ՀՅԴ-ի հետ եւ այդ մասին նաեւ հրատարակած էր գրքոյկ մը): Տ. Գազանճեան կը ստուգէ նաեւ, որ հնչակեան վարչութիւնը իր նախնական համաձայնութիւնը տուած է այդ առաջարկութեան, բայց ապա հրաժարած է անորմէ, որովհետեւ «Լազօն որպէս Կեդրոնի անդամ արգելք է յարուցել այդ ծրագրի դէմ» (17): Բնական է, որ փորձառու Լազօն համաձայն չըլլար այդպիսի անհեռանկարային արկածախնդրութիւններու: 1921 Փետրուար 25-ին, Սիւմն Վրացեանի գլխաւորած «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ»ի իշխանութեան օրերուն, երբ տակաւին կարմիր պոլշեիզմի քղամիդը հազած քեմալական Թուրքիան Ալեքսանտրապոլի նահանգը գրաւած կը պահէր, Երեւանի մէջ կը կազմուի Միջ-կուսակցական խորհուրդ, որուն մաս կը կազմէն ՀՅԴ, ՄԴՀԿ, Հայ ժողովրդական, Հայաստանի ԱԴ Բանուորական, Սամանադիր Ռամկավար եւ Սոցիալիստ Յեղափոխական կուսակցութիւնները: Խորհուրդին նախագահ կ'ընտրուի Բախչի Իշխանեան, իսկ քարտուղար՝ Լազօ: Խորհուրդը կ'ունենայ երկու բաժանմունք. «առաջինը պէտք է պարզուի գործող բանակի համար պարէն ժողովուրդի եւ հայթայթութեան, երկրորդ սեկցիան ժողովրդի եռանդը վառ պահելու համար՝ լայն փրփականտա եւ ազդեցիկ մղելով» (18):

Լազօյի այս քայլը ապագային խիստ կերպով կը քննադատուի Հայաստանի պոլշեիկներուն կողմէ, որոնց մէջ Կոմկուսի քարտուղար, պատմաբան Աշոտ Յովհաննէսեան կը գտնէ, թէ «Փետրուարեան հակայեղափոխութեան օրերին՝ Երեւանի հնչակեանները հաւատարիմ հպատակութիւն են յայտնել Ս. Վրացեանին»: Ստեփան Սապահ Գիւլեան կ'ընդգծի այս գնահատականին դէմ ու կը գրէ. «Փետրուարեան հակայեղափոխութեան օրերին՝ ընկ. Լազօն, քրտերի այդ լուսաւորիչը, նրանց դպրոցների վարիչը, իր կրթական գործը շարունակեց, չփախաւ: Այս է, որ քարտուղարը, ուռեցնում, «լուսուղտ է դարձնում», մասնաւորը ընդհանրացնում: Երբ զօր-զօրական չկայ, մարտական ոյժը դուրս է եկել գծից, տիրել է պարտութիւնը... Ծերունի Լազօն ի՞նչ պիտի անէր: Հիմա ճակատ ճակատի: «Փետրուարեան հակայեղափոխութեան օրերին՝ Երեւանի հնչակեանները հաւատարիմ հպատակութիւն յայտնեցին...»: Իսկ դու ինքդ, դու, Հայաստանի Կոմունիստ կուսակցութեան ներկայ քարտուղար, դու ինքդ «այդ օրերին» ի՞նչ արեցիր...? Դու փախար, փախար» (19): Այստեղ, Ս. Սապահ Գիւլեանի մեկնաբանութիւնը համոզիչ չէ: Խօսքը փախելու կամ չփախելու մասին չէ, այլ՝ շատ աւելի սկզբունքային դիրքորոշման մը մասին: «Փետրուարեան հակայեղափոխութենէն» շատ առաջ, 1920 Հոկտեմ-

բերին, թրքական բանակներուն Հայաստանի վրայ կատարած յարձակման օրերուն, վերոյիշեալ կուսակցութիւններէն կազմուած (բացի Հայաստանի Սոց. Դեմ. Բանուորական կուսակցութենէն, որուն նախագահն էր Բ. Իշխանեան) միջ-կուսակցական խորհուրդը կը հրապարակէ զօրահաւաքի հրաւիրող կոչ մը, ուր կ'ըսուի. «Միջ-կուսակցական մարմինը յայտարարում է սրանով ընդհանուր զօրահաւաք բոլոր գէնք կրելու ընդունակ քաղաքացիներին: Բոլոր կուսակցականները, համերաշխ ու ոգեւորուած, կանգնած են իրենց դիրքերուն: Հայ քաղաքացիութիւնը եւս պիտի անխտիր ծառանայ խնամու հանդէպ որպէս մի մարդ: Ի գէն քաղաքացիներ, մի վերջին ճիգ եւս, յաղթանակ մերն է: Թող կորչի արիւնարբու Քեմալը: Կեցցէ ազատ հայրենիքի պանծալի բանակը» (20): Այս դիրքորոշումը Հնչակեան կուսակցութիւնը կ'արտայայտէ նաեւ Խորհրդային իշխանութեան օրերուն: 1920 Դեկտեմբերին, Հայաստանի Յեղկոմը կը փափաքի ՄԴՀԿ-էն գրաւոր իմանալ Հայաստանի առջեւ դրուած կարգ մը քաղաքական հարցերու մասին անոր դիրքորոշումը:

Այս առիթով, ՄԴՀԿ Երեւանի վարչութիւնը իր պատասխան նամակին մէջ առաջնահերթ կը նկատէ քեմալական բանակներուն հեռացումը Հայաստանէն, որովհետեւ Խորհ. Հայաստանը իմբերիալիստական երկիր մը չէ այլեւս եւ «Մուսթաֆա Քեմալը կարող է միանգամայն իրեն ազատ զգալ եւրոպական իմբերիալիստների դէմ վարած կուռի ընթացքին» (21): Այստեղ խօսքը հայրենիքի գոյութիւնը պաշտպանելու եւ այդ հոն հաստատուելիք վարչակարգին աւելի առաջնային նկատելու սկզբունքին մասին է, որուն հաւատարիմ հետեւորդներէն էր Լազօ, նոյնպէս:

1923-ին ՄԴՀԿ Թիֆլիսի Կեդր. Վարչութիւնը դիմում կը կատարէ Մոսկուա, Կոմիտէի գործադիր մարմնին, փափաք յայտնելով անդամակցիլ անոր: Կոմիտէի ներկայացուցած պայմանները այնպիսին էին, որ անոնց գործադրութիւնը կը նշանակէր աշխարհի տարածքին հնչակեան մասնաճիւղերուն լուծարքը կոմունիստ կուսակցութիւններուն մէջ: Խորհրդային Միութեան տարածքին, այլ ընտրանքի բացակայութեան պայմաններուն տակ կամ անկեղծօրէն հաւատալով, շատ մը հնչակեան ղեկավարներ համաձայն կ'ըլլան «խաղաղ» լուծարքին:

Լազօ կ'ըլլայ ընդդիմադիրներէն մէկը: Այս կապակցութեամբ Թիֆլիսի Կեդրոնական Վարչութեան շարքին յղած շրջաբերականի տակ Լազօյի ստորագրութիւնը չ'երեւիր, որ բնաւ պատահականութեան արդիւնք չէր (22): Այդ օրերուն, «շարքային գտման» անուան տակ, կուսակցութեան շարքերէն կը հեռացուին այնպիսի անբասիր կուսակցականներ, ինչպիսիք էին Իսահակ Հովեանը (Կեդր. Վարչութեան անդամ Ս. Տաշիրի եղբայրը), Սարգիս Սարգիսեանը (Փարամազի եղբայրը) եւ ուրիշներ: Կատարուած պարտադրանքը ակնհայտ էր: «Մի երրորդ նամակի մէջ, դարձեալ Թիֆլիսից, գրում էին որ «բան չէր մնացել արտաքսէին Կեդրոնական Վարչութեան անդամ Լազօյին: Նա հիմա գրեթէ մենակութեան է դատապարտուել Կեդրոնի մէջ, որովհետեւ դէմ է

ՊԱՏԱՐԱԳ ԱՇՏԻՇԱՏՈՒՄ

»ՆԱԽՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԶՈՒՆԵՑՈՂ ԺՈՂՈՎՈՒԴՐԸ ԶԻ ԿԱՐՈՂ ԵՐԿԱՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ« ԲԱՑՅԻ

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԱԿԻՍԵԱՆ

Հէ՛ջ, տիեզերական անհուններ-
րի ճամբաներով անցնող այս
մոլորակի կրակածին, արեւալոյս
լեռնաշխարհի հաւատափոխ Ար-
մին-հայեր, ում հոգու տաճարում
վառուում է ջահը իր անուշ նախ-
նինների պատումներով, ում մտքի
երեւակայութեան հրացոլքում պայ-
թում է նրանց քաջ գործերի արա-
րումների կրակալոյսը, ում հոգու
ատուշանում իր ցեղի ոգու ան-
թեղուած կրակն է վառ, ում արեան
յուրձանուտներում արթուն է ճրա-
գալոյսը նրանց տիեզերական իմաս-
տութեան հաւատքի, ում ծիններում
շարունակում են արեւել նրանց
արարչական արարումների լոյսի
սքանչանքը, լսեցէ՛ք իմ խօսքը:
Արմին-հայերը Աշտիշատում պա-
տարագելու են իրենց նախնիների
արարումներն փառքը, նրանց
սպանուած աստուածների հրաշա-
պատումը:

Զեւս-Շուրինի աստուծոյ որ-
դի՝ Ապոլլոնի, ու նրա ինն Մուսա
դուստրերի պաշտամունքին նուիր-
ուած լեռան լանջերի շէնից եկած
մի Արմին Հայ, պատարագելու է
իրենց անուշ նախնիների քաջ
գործերի, նրանց տիեզերական հա-
ւատքի բնութեան հրաշածին երե-
ւոյթների մարդացած աստուածնե-
րի լուսաճաճանչ յուշապատումը,
այն ընծայելու, նուիրելու նրանց
յաւերժութեանը: Պատարագ՝ ըն-
ծայնուէր նրանց արարչական ցե-
ղի ոգու սրտի անմահութեանը,
նրանց յաւիտենականութեան ճամ-
բաների երթի փառքանմանը: Աշ-
խարհ անցած Արմին-հայերի ոգե-
կիր հոգիների տաճարների ջահե-
րի երեւածուփ լոյսերի հէքիաթը,
իրենց մանուկների սրտերին հոտող
ցեղի ոգու լոյսն է: Նախնիների
տիեզերական հաւատքի, բնութեան
սքանչանքի, ցեղին սրտի ու նրա
ոգու իմաստութեան երկրպագու,
իրենց աստուածների հետ զինի
ըմպած, նրանց արթնած հրայրքով
բանաստեղծութեան տաղեր երկ-
նած, վարդավառեան տօնախմբու-
թիւններին Աստղիկ դիցուհու իրա-
նից հոսած ջուրը ըմպած, Արամագ-
դի անդրին գոհած ցուլի արիւն
հեղեղած՝ քրմացած վարուժանի
տաղերը երգելով գնանք Արմինա-
Հայաստան Լեռնաշխարհի Տարօն
երկրամասի վահունի քրմապետի
ծառայութեան Արմին-հայերի աստ-
ուածների Աշտիշատ ական: Ար-
մին-հայերը, Աստղիկի ու վահագ-
նի հարսանեկան հանդէսին, Աստ-
ղիկ դիցուհուն նուիրաբերուած
վարդավառեան տօնախմբութեա-
նը, իրենց նախնիներին, իրենց
մարդացած աստուածներին պա-
տարագ են մատուցելու:

Պատարագ: Այն, հաւատա-
փոխ եղած Արմին-հայերի նորա-
ճանաչ վարդապետի անձնագոհու-
թեան՝ ջերմեռանդ երկիրդածու-

թեամբ իրականացուած խորհր-
դանշումն է: Այն կատարում է
գրքերի ընթերցումներով, աղօթք-
ներով, երգեցողութեամբ, երաժշ-
տական յորինումներով, ծիսական
արարողութիւններով: Մարդկային
պատմութեան ընթացքում որեւէ
պատահարի անձնագոհութեանը
նուիրուած նման իմաստուն, խորհր-
դաւոր, հրաշափառ տաղերի երգե-
ցողութեամբ արարողութիւն, թէ՞
համանուագ, չէ յորինուած: Ար-
մին-Հայերի նախնիներ, իրենց մար-
դացած աստուածների փառաբան-
ման տօնախմբութիւնները աշխար-
հային խրախճանք էին: Աշտիշատ
էին գալիս թագաւորները, իրենց
արքայական ընտանիքներով, նա-
խարարական տները, շէների աշ-
խարհական ժողովուրդը, մեհեան-
ներում պատարագում մարդացած
աստուածների փառքը, իրենց
աշխարհին բարիք տեղալու ըղ-
ճանքով, իրենց նոր բերքի երա-
խայրիքը նուիրաբերելու, ընծայե-
լու նրանց, որոնց իւրաքանչիւրը
տիեզերական մի իմաստութեան
բարեպաշտ կրողն էին: Աշտիշատ,
Արմին-հայերի սրբազան գետ՝ Արա-
ծանիի աջ ափին էր, յետագայում
կոչուած Դերիկ: Արմին-հայերի
նախնիների հեթանոսական (այլ
հաւատք դաւանող) հաւատքի՝ լոյ-
սի ու կրակի պաշտամունքի մեծա-
գոյն կեդրոնն էր: «Աշտի», «Ար-
տու», «Աստու» բաղադրիչների
կրակ իմաստով կրակի քաղաք՝
Աշտիշատ անունով: «Շատ» ածան-
ցը քաղաք անուան իմաստով, ինչ-
պէս աշտանակ բառը նշանակում է
կրակ կրող: Այնտեղ էր կրակի,
ինչպէս նաեւ պատերազմի ու յաղ-
թանակի աստուած վահագնի մեհե-
անը, «վահ» բաղադրիչի բոցա-
վառ իմաստով: Աշտիշատում, Լեռ-
նաշխարհի կրակը վառ պահող
քրմերը նորէն կրակ իմաստով
վահունիք, իսկ տաճարը՝ վահէ-
վահեան էր կոչուած: Աշտիշատում
էին նաեւ Անահիտի ու վահագնի
սիրեցեալ՝ Աստղիկի, մեհեանները:

Աշտիշատին մօտիկ սօսեաց
անտառակն էր: Արմինայի Սբազան
Լեռնաշխարհում արարուած դրախ-
տը, նրա գեղաւսքանչ անտառներից
մնացել էր սօսեաց անտառակը:
Նրա լեռների լանջերից պայթած
վճիտ ջրերից շարունակել էր յոր-
դել սօսեաց անտառակի առատա-
հոս աղբիւրը: Աշտիշատում աստ-
ուածների փառաբանման տօնախմ-
բութիւններին եկած Արմինայի
արքաները, աշխարհային շինա-
կանները այդ աղբիւրից ջուր էին
ըմպել, վարդավառին իրենց ու
Աստղիկին նրա ջրով օծել: Աշտի-
շատում հանգրուանած աստուած-
ները նաեւ այդ աղբիւրի ակներից
պայթած արեւալոյս ջուր էին ըմ-
պել: Լեռնաշխարհի անտառակ, որ-
տեղ արմինների իմաստուն քուր-
մերը սօսիների տերեւների սօսա-
փիւնները գուշակութիւններ էին

կատարում:

Աշտիշատ, Արմինայի Սրբա-
զան Լեռնաշխարհի Տարօն գաւա-
ռի Մշոյ դաշտի տարածքում էր:
Դրախտի անհպելի ծառից տիեզե-
րական իմաստութիւնը քաղելու
համար, Աստուած իր արարած
առաջին մարդ ու նրա կողի ոսկո-
րից ստեղծած կինը վունտեց այն-
տեղից: Նրանք հասան կրակի, գե-
տերի, լեռների լանջերից բխող
աղբիւրների, գեղաշուք անտառնե-
րի, հարիւր-հարիւր տեսակ կեն-
դանիների կրակալոյս երկիր:
Բազմացան, գնացին աշխարհը լցրին
իրենց նմաններով: Հազար-հազար
տարիներ յետոյ էլ գնացողները
գրեցին իրենց կաւէ սալիկներին,
որ դրախտը հեռու կրակի երկրում
է, այնտեղ բազմացած մարդիկ
իրենց անուանել արեւորդի-արոր-
դի Արմիններ: Հերկել էին դաշտե-
րը, խորունկ առուներ բացել, գե-
տերից ջուր հոսեցրել, անոնց կոչել
Եփրատ, Տիգրիս, Գեհոն (Արաքս),
Փխոն (Կուռ) գետեր: Մշուշ պա-
տած դաշտը կոչել՝ Մուշ-Մշոյ
դաշտ, իրենց աւիւնով արփիացած
հողը՝ մայր հող, արմիններին սնու-
ցող հող: Կրակի երկրում ծիածան
կապած այգիներ, ցորենի արեւա-
յին հասկերի շողեր ծփացել, քա-
րաշէն տներով շէնք յառնել: Առա-
տաբեր դաշտերի, կրակալոյս Լեռ-
նաշխարհի լեռների երկիր եղեւ
այն, աստուածների բնակավայր
կրակի քաղաք եղեւ այնտեղ: Հար-
սանեաց հանդէս, վարդավառ էր
լինելու: Աստուածներն էին այն-
տեղ իջել, Աստղիկի ու վահագնի
հարսանեաց հանդէսի պատարագի
տօնախմբութեանը մասնակցելու:
Արմին-հայերի Լեռնաշխար-
հի արորդի-արեւորդի մարդիկ եր-
բեք չէին մոռացել իրենց նախնի-
ների խօսքը, իրենց աստուածների
հետ խոսքը, իրենց քաղաքի խօս-
քի նշաններ՝ գրեր էին արարել,
իրենց խօսքով գրեցին քարերին,
գրեցին իրենց տաճարների որմե-
րին, գրեցին իրենց կացարանների
պատերին, իրենց աշխարհից գնա-
ցած մարդիկ այն իրենց հետ տա-
րան:

Արատտա-Այրարատ երկրի
Մեծամօր ոստանի ձիավար իշխա-
նը, երկվարին բազմած բեհեգեայ
հանդերձով թագուհին, գինավար
այրուձիի գուռը, ոստանի աւագ-
ները եւ աշխարհական ժողովուրդն
էին առաջնորդում դէպի աստ-
ուածների բնակավայր: Գուռը
լանջազրահ, սաղաւարտակիր մար-
տիկները, զրահաւորուած էին իրենց
քաղաքի հնոցներում ձուլուած մե-
տաղով: Նրանք ձիավարում էին
իրենց պղնձաձուլ վահանները դէ-
պի արեւը պարգած: վահաններից
անդրադարձած կրակ լոյսը ցա-
նում դաշտերի այգիներին: Վառ-
ում էին այգիները, ծառերի պտուղ-
ներն էին օրօրում որպէս ջահեր,
լոյսի հէքիաթի հրաշախաղ էր:
Գուռը հետ գնացող աւագների
իմաստուն աստղագէտները, երկն-
քում իրենց գաղտնագրած աստ-
ղերի քարտէսով մագաղաթները
վեր պահած՝ հպարտ քայլում էին:

Մագաղաթները նուիրաբերելու էին
Աշտիշատի իմաստուն վահունի
քրմապետին, այն ի ցոյց դնելու
մեհեանում: Երկնակամարում, Միհր
արեւ աստուածն էր Մեծամօրի
իշխանի հետ քայլում, ճանապարհի
երթի ամպերն էր անէացնում, որ
լուսաւոր լինէր կարաւանի ըն-
թացքը դէպի Աշտիշատ:

Արմանի երկրի թագաւորը,
ձիու թամբին իրեն պինդ գրկած
թագուհու հետ, մեհեանի գլխաւոր
քրմապետի ուղեկցութեամբ, բազ-
մախումբ շինականների շարասիւնն
էին առաջնորդում դէպի Աշտի-
շատ: Շինականների շալակներին
իրենց արտերի ոսկի հասկերով
ցորենի խուրձեր, ձեռքերին
իրենց այգիներում հասունացած
ծիածանի գոյներով շառագունած
մրգերով կողովներ էին: Այդ տար-
ուայ ցորենի առաջին հունձքի
երախայրիքը պիտի նուիրաբերէ-
ին աստուածներին, Աշտիշատի մեհե-
անին, վահագնի հարսանեաց հան-
դէսին:

Լեռնաշխարհի քսան եօթ
բիսյաններն մէկ տէրութեան մէջ
միաւորած, իրենց երկիրը ասպա-
տակած Ասորեստանի մայր ոստա-
նի պարիսպները փլած, երկրի
արեւմտեան կողմն աշխարհներ
նուաճած, նոր հիմնադրած քաղաք-
ների մարդկանց իր աստուածների
պաշտամունքը ու խօսքը պար-
տադրած Արմինա-Բիսյան երկրի
նժոյգավար Արամ-Արամէ աշխար-
հակալ հօր արքան, գեղազարդ
գրահը լանջին, արեգակի սկաւա-
ռակով ոսկեհուր թագը գլխին,
մշոյ դաշտ իջած առաւօտեան մշու-
շի ծուկները հիւսած հանդերձով
երկվարին բազմած թագուհին, հե-
տեւակի սպառազէն զուռը եւ
շինականները հոծ արքերն էին
առաջնորդում դէպի Աշտիշատ:
Շինականները, աստուածների փա-
ռաբանման շեփորներ էին հնչում:
Կանաչ ոստեր էին վերեւ բարձրաց-
րել, տերեւների տակ կայծեր էին
բոցկլտում, իրենց երկրում հասու-
նացած ծիրանն էր այն: Իրենց
աստուածներն էին տիեզերքում բո-
ցավառուած խորոյկներից քաղել
այն ու Արմինա երկիր բերել:
Հազար-հազար տարիներ, միայն
Արմինա երկրում է հասունացել
այն, պիտի գնար տիեզերական
կրակի բոցը նաեւ ցանելու ուրիշ
աշխարհներ, նրանց մարդկանց տի-
եզերքի կրակի համով պտուղ պար-
գելու:

Արմինա աշխարհի քսան
եօթ Բիսյանների իշխանները, վար-
սերը հովին բացած ձիավար թա-
գուհիները, առանձին սպառազէն
գուռներով, իրենց հետեւող Արմին
շինականներով, արեւ աստուած
Միհրի ծիրանի գոյներով շառա-
գունած դրօշներով, իրենց աստ-
ուածների փառաբանման երգերով
գնում Աշտիշատ: Հոծ էին գինեալ
գնդերի ու շինականների շարքերը,
շտապում էին վարդավառի եւ Աստ-
ղիկի ու վահագնի ամուսնութեան
հանդէսի աշխարհական տօնախմ-

Շարք էջ 20

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՆՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

OFFICES FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով Յետաքրքրուողներէն
հեռաձայնել՝ (626) 398-0506

ԼԻԻՍԻ ՍԻԻԼԱՅԵԱՆԻ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՈՒՐԻԱՑԻ ԱՐԱԲ ԳՐՈՂՆԵՐ» ՅԱՏՈՐԸ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Վերջերս Հայկազի մէջ լոյս տեսաւ «Մաղկաքաղ ժամանակակից սուրիացի արաբ գրողներու» հատորը, (428 ծաւալուն էջ, նկարազարդ):

Սուրիահայ գրողներ եւ մտաւորականներ, որոնք տիրապետած են արաբերէնին, հայերէնի թարգմանած են սուրիացի արձակագիրներու, բանաստեղծներու, թատերագիրներու ստեղծագործութիւնները:

Հատորին մէջ տեղ գրաւած են աւելի քան 20 հեղինակներ:

Արաբագէտ թարգմանիչներն են բացի սուրիացի արաբ գրագէտ եւ բանաստեղծ Նիզար Խալիլիէն, որ իր կարգին հայերէնի թարգմանած է:

Այս հատորին մէջ թարգմանչական աշխատանք կատարած են՝ Պետրոս արք. Միրիաթեան (առաջնորդԲերիոյ թեմի կաթողիկէ հայոց), դոկտ. Վաչէ Ղազարեան, Լեւոն Շառոյեան, Սարգիս Զաքարեան, Յովսէփ Նալպանտեան, Մատոնա Սերայտարեան, Միհրան Մինասեան, տոքթ. Ալեքսան Բեշիշեան, Զեփիւռ Թամբերեան, Մակի Վերա Սիւլահեան, տոքթ. Ռոպերթ Սիւլահեան, Նազար Նազարեան: Այս թարգմանիչներէն ոմանք թարգմանած են մէկէ աւելի երկեր:

* * *

Այս հատորը իրագործուած է գրագիտուհի Լիւսի Սիւլահեանի ջանքերով: Ան տարիներ շարունակ, 1970-ական թուականներէն սկսեալ, նախաձեռնած է կապ պահել Սուրիացի գրողներու միութեան ներկայացուցիչներուն, նաեւ անհատ սուրիացի գրողներու, բանաստեղծներու եւ մտաւորականներու հետ: Այս մտեցումը շինիչ եւ արդիւնաբեր եղած է հայ եւ արաբ գրողներու մերձեցման, փոխյարաբերութիւններուն ծաղկումին, երկու ժողովուրդներու մշակութային եւ գրական-ստեղծագործական երեւոյթներուն մասին փոխադարձ ճանաչումի: Այս ոլորտին մէջ հիմնական դեր ունեցած է արժէքաւոր եւ տաղանդաւոր արաբ գրագէտ եւ բանաստեղծ Նիզար Խալիլի, որ հայերէն սորվելով, կատարած է թարգմանչական աշխատանք՝ արաբերէնէ հայերէն եւ հայերէնէ արաբերէն:

Լիւսի Սիւլահեան հեղինակ է պատմուածքներու հատորներու: Ան հիմնած է գրական սալոն մը, ուր իրարու հանդիպած են արաբ եւ հայ գրագէտներ, թարգմանիչներ, լեզուագէտներ: Այս իմաստով ան կարելոր ներդրում ունեցած է հայ գրագէտները արաբ ընթերցողներուն ծանօթացնելու եւ՝ փոխադարձաբար:

«Մաղկաքաղ ժամանակակից սուրիացի արաբ գրողներու» հատորին լոյս ընծայման ետին կը



կանգնի Սուրիոյ հայ կաթողիկէ համայնքի առաջնորդ Պետրոս Արք. Միրիաթեան, որ իր հայրական քաջալերանքով, արաբագէտի շնորհներով նիւթապէս եւ բարոյապէս զօրավիզ կանգնած է հայ-արաբ մտաւորականութեան եւ մշակութիւն նուիրուած արժանաւոր գաւազներուն փոխադարձ ծանօթացման:

Կ'ուզենք այս առիթով մատնանշել, թէ Լիւսի Սիւլահեան արաբ գրողներու երկերը հաւաքած է անցնող աւելի քան 40 տարիներու ընթացքին, եւ զանոնք փրկած է դարակներու մէջ մնալու տխուր վիճակէն: Իր մեկնումը Սուրիայէն դէպի Միացեալ Նահանգներ՝ դանդաղեցուցած է աշխատանքը շարունակելու գործունէութիւնը, որով կարելիութիւնը չէ ունեցած նոր սերունդին թարգմանչական ներդրումը եւս օգտագործելու:

Արաբ գրողներու երկերը կարդալով՝ կը ծանօթանանք անոնց կենսափորձին, տաղանքներուն, ընկերային անարդարութիւններուն, գիրի ու գիրքի հանդէպ ցուցաբերուած անտարբերութեան, իրողութիւն մը, որ առկա է նաեւ մեր կեանքին մէջ՝ ուսումնական թէ արուեստի ճանապարհին:

Հետաքրքրական եւ սրտամօտ գտանք կարգ մը գրագէտներու տեսակէտները հայ ժողովուրդի ճակատագրին, Յեղասպանութեան, անտես մնացած հայ ժողովուրդի Դատին եւ իրաւունքին վերաբերեալ: Այս թեմայով արտայայտուած են անոնցմէ շատեր, որոնց կը յայտնենք մեր երախտագիտութիւնը:

Սուրիոյ արաբ գրողներու այս «Մաղկաքաղ»ը վաւերագրական արժէք ունի, որուն լոյս ընծայման համար կը շնորհաւորենք հայկա-հայ գրողները եւ զանոնք քաջալերողները, որոնց իր հովանաւորութիւնը շնորհած է Պետրոս Արք. Միրիաթեան, ամենայն սրտակցութեամբ, ամրացնելով «ոգեղէն կամուրջը»՝ հայ եւ արաբ գրողներու միջեւ կառուցուած:

Մ. ՍԱՐԵԱՆԻ ԾՆՈՒՆԴԸ. ԻՐԱԿԱՆԻ ԵՒ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆԻ ՄԻԱԶՈՒԼՈՒՄ ԿՏԱԲՆԵՐՈՒՄ

Մարդկութեան պատմութեան մէջ իւրաքանչիւր օր առանձնանում է որեւէ առանձնայատուկ իրադարձութեամբ: Հայերիս համար Փետրուարի 28-ը առանձնանում է նաեւ նրանով, որ այսօր ծնուել է հայ ազգի հանճարեղ ներկայացուցիչներից, XX դարի մեծագոյն նկարիչներից մէկը՝ գոյների ակնառու վարպետ Մարտիրոս Սարեանը:

Սարեանի վառ, հարուստ գոյներով լեցուն կտաւները, նոր գեղագիտական ընկալում են զարգացնում՝ հնարաւորութիւն տալով հասկանալ, որ արուեստը պահանջում է արտայայտման ազատութիւն եւ աքսորակցի: Միեւնոյն ժամանակ նկարիչն իր ստեղծագործութիւններում պահպանում է պարզ, բնական ձեւեր: Մարտիրոս Սարեանը միշտ բնութիւնը համարել է իր գլխաւոր ուսուցիչը:

Կենսագրութիւն

Մեծագոյն նկարիչ Մարտիրոս Սարեանը ծնուել է 1880 թուականի Փետրուարի 28-ին Նոր Նախիջեւան քաղաքում՝ Դոն գետի մօտ (այժմ մտնում է Դոնի Ռոստովի տարածքի մէջ): Սարեանի նախնիներն Անիից են եղել: Ապագայ նկարիչի ծնողներն զբաղուել են հողագործութեամբ: Ընտանիքում ութ երեխայ կար, նրանք ծանր կեանքով են ապրել: Այդուհանդերձ, Սարեանն առանձնայատուկ



ես որոշեցի հետեւել իմ սեփական ձգտումներին... Ամէնը, ինչ էս նկարում էի սկսած 1904 թուականից, եղել է իրականութեան եւ երեւակայականի միաձուլում: Իրականութեան, քանի որ էս նկարում էի տեսածիս ազդեցութեան ներքոյ, երեւակայութեան, քանի որ էս դա սինթեզում էի իմ երեւակայութեան մէջ»:

1971-1972 թուականներին Սարեանն ստեղծեց նկարների շարք ֆլումաստերով: Դրանց մէջ ակնյայտ կերպով նկատուած է նկարչի հարմոնիկ մեղեդայնութիւնը: Որոշ տուեալների համաձայն, Մարտիրոս Սարեանն իր վերջին կտաւը ստեղծել է 1972 թուականի Ապրիլի 4-ին, այսինքն՝ մահից մէկ ամիս առաջ:

Նկարիչը մեծ ճանաչում է ստացել Ռուսաստանում: Նրա կտաւները ձեռք են բերուել Տրետիկովեան պատկերասրահի կողմից, որոշ-



ոգեչնչումով էր յաճախ յիշում իր մանկական տարիները: Մանկական աշխարհը նկատուած ընդմիշտ վճռեց արեւի լոյսի եւ գոյնի բնական խառնուրդի դերը նկարչի տեսողական ընկալման մէջ:

1901-1903 թուականներին նկարչի ուղեւորութիւնները Սարեանի համար իրական բացայայտում դարձան: 1902 թուականի ամռանը նկարիչն այցելեց Անի: «Հարաւի գեղատեսիլ անկիւններում, մեր հինաւուրց երկրում էս կրկին ձեռք բերեցի իմ մանկութեան հեքիաթային աշխարհը», յետագայում պատմել է նկարիչը: Հարաւային արեւի եւ դրա կողմից ստեղծուող գունային էֆեկտների ազդեցութեան ներքոյ փոխուում է Սարեանի առաջին ինքնուրոյն ստեղծագործութիւնների պատկերային համակարգը: «Իմ կեանքի ամենաբարդ շրջանը սկզբնական փնտռութիւնների շրջանն է,- յիշում է նկարիչը,-... Անցած ճանապարհներն ինձ չբաւարարեցին...»

ները գտնուում են Եւրոպայում:

Վերջերս լոնդոնեան «Sotheby's» աճուրդի տանը վաճառուեց Սարեանի «Արագածի լանջերին» կտաւը:

Նկարի նախնական գինը տատանուել է 500-700 հազար ֆունտ ստերլինգի միջեւ: Այն վաճառուեց 623,650 ֆունտ ստերլինգով (999,586 տոլար): Այն ստեղծուել է 1907 թուականին:

Երեւանում, ինչպէս յայտնի է, կայ Սարեանի արձանը: Քաղաքի կենտրոնական փողոցներից մէկը եւս նրա անունով է անուանակոչուել: Հենց այդ փողոցի վրայ էլ գտնուում է նրա տուն-թանգարանը: 2000 եւ 2005 թուականներին թողարկուեցին ՀՀ փոստային նամականիչներ՝ նուիրուած Սարեանին: Դոնի Ռոստովում եւս կայ Սարեանի անուն փողոց: Սերգէյ Շերվինսկու՝ «Սարեանի արուեստանոցում» բանաստեղծութիւնը (1985) եւս նուիրուած է Սարեանին:

Advertisement for a chiropractic clinic. Text includes address: 833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065. Photos of Dr. Missak Ekmekdjian and Dr. Anahid Ekmekdjian, Chiropractors. Text in Armenian describes services: «Եթե անհարմարութիւնք եւ մտնուելներ Քարթագիտութիւնը բուժում: Փոխազատ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցանցի: Ինքնաշարժի վթարի եւ տեսնելով պատահած վնասուածքներու բուժում:»

ՅԱԿՈՒ ՂԱԶԱՐԵԱՆ (ԼԱԶՕ)

Շարունակում էք 15-ին

Թարմ հոսանք կուսակցություն մէջ մտցնելուն», կը գրէ Գ. Եղիկեան:

Կարելի է պատկերացնել այդ օրերուն Լազոյի ապրած կսկիծն ու հոգեկան խռովքը: Լազո կը մահահանայ 1926-ին, Թիֆլիս: Լազոյի մահագուժը տալով, Փարիզի հնչակեան «Նոր Երկիր» թերթը, «Վեթերան Ընկերը Մը Մահը» վերնագրին տակ կը գրէ. «Ապրիլ 4-ին, Թիֆլիսի մէջ մեռած է հնչակեան վեթերաններէն ընկեր Լազո (Յակոբ Ղազարեան), որ իր ամբողջ կեանքը նուիրած էր ո՛չ միայն իր սիրած կուսակցութեան գաղափարներու իրականացման, այլեւ եզրտիրները հայացնելու, քաղաքակրթելու գործին: Լազո հայերէն տառերը ձեւափոխելով պատշաճեցուցած էր եզրտական հնչուներու: Խաւարի մէջ մնացած եզրտիրները, շնորհիւ Լազոյի, լոյս աշխարհ կու գան եւ ցարդ կը գործածեն այդ տառերը: Լազոն ունէր գիտական, գեղարուեստական եւ վիպական թատերական գրուածներ եւ քիւրտ-եզրտական կեանքի պատմութեան, հոգեբանութեան, կեանքին ու կենցաղին նկարագրութիւնները: Ան ազգերու եղբայրակցութեան ճշմարիտ քարոզիչը, հաւատաւորն էր: Լազո՝ Հայաստանի խորհրդայնացումէն յետոյ, թէեւ մինչեւ վերջ մնաց անհաշտ հակառակորդ պոլ-շեւիզմի, բայց նուիրուեցաւ շինարարական աշխատանքի: Յարգանք պարտաճանաչ գործիչի յիշատակին»:

Գ. Եղիկեան քիչ մը այլ դիտանկիւնէ կը մօտենայ Լազոյի մահուն: Ան կը գրէ. «Բայց կար Լազոն... որ «Նա դէմ է եղել կուսակցութեան կեանքում Թարմ հոսանք մտցնելուն», այսինքն՝ կուսակցութիւնը համայնավարներու պոլիէն կապելու:

Եթէ նրան ձեռն չտուին բացարձակապէս՝ միմիայն նրա համար էր, որ նա արտասահմանում ժողովրդականութիւն էր վայելում, մինչդեռ Կեդր. վարչութեան միւս անդամները ոչ մի ժողովրդականութիւն չունէին: Լազոյին պահեցին կուսակցութեան մէջ՝ մինչեւ որ կուսակցութիւնը լուծուած յայտարարուեց նրա պաշտօնակիցների կողմից: Մի քանի ամիս յետոյ նա մեռաւ, հաւանաբար չկարողանալով տանել կատարուած անիրաւութիւններն ու բռնութիւնները, կամ ո՛վ գիտէ, որովհետեւ նրա անունը արտասահմանեան հնչակեաններին խաբելու համար այլեւս պէտք չէր: Նա գուցէ «սրտի պայթիւն» էր ունեցել կամ որեւէ սրակում էր ստացել իր արեան մէջ «շուտ քեղեկութիւն համար» (նա հիւանդանոցում մեռաւ), եւ տարել էր իր հետ իր վիշտերը, վրդովմունքները ու «մահուան գաղտնիքը» (25):

Տարիներ առաջ, խորհրդարանի նամակատուիէս սկսայ ստանալ «Սիւրկել» պարբերաթերթը (քանի մը թիւ): Լիբանան տպուող, արաբատառ թերթ մըն էր, որ ամբողջապէս նուիրուած էր քրտական հարցերու: Յօդուածներէն մէ-

կը կը վերաբերէր քրտական այբուբենին, ուր յիշուած էր նաեւ Լազոյի անունը, առանց անոր մասին բացատրութիւն մը տալու: Որոշ ժամանակ անց, «Սիւրկել»-ի խմբագրութենէն կը ստանամ հեռախօսազանգ մը՝ հետո հանդիպելու փափաքով: Երիտասարդ աղջիկ մը եւ տղայ մըն են եկողները: Իրենք զիրենք կը ներկայացնեն որպէս Լիբանան ապրող քիւրտեր, որոնք համակիր են Թուրքիոյ մէջ քրտական պայքարին: Կը հետաքրքրուին լիբանանահայութեամբ, Հայաստանի հետ մեր ունեցած կապերով, Ղարաբաղի հարցով, հայկական կուսակցութիւններուն յարաբերութեամբ, եւ այլն, եւ այլն: Կ'ըսեն, թէ մտադիր են այսպիսի հանդիպումներ ունենալ հայկական կուսակցութիւններուն, մամուլի օրկաններուն, հաստատութիւններուն հետ, եւ այլն: Առիթէն օգտուելով կ'ըսեմ, թէ իրենց թերթին մէջ հանդիպեցա՞յ Լազոյի անունին, ամբողջապէս անտեղեակ են: Կը խոստանամ Լազոյի անձին եւ հետապնդած նպատակներուն մասին ամփոփ յօդուած մը տալ «Սիւրկել»ին. ուրախութեամբ կ'ընդունին:

Իրենց մեկնումէն ետք, անմիջապէս կ'այցելեմ «Արարատ»-ի խմբագրատուն եւ խմբագիր ընկ. Աւօ Փռոշոյեանին կը յայտնեմ, թէ նման հանդիպումի մը հանդէպ ուշադիր ըլլա՞յ, որովհետեւ եկողները ՄԻԹ-ի անդամներ են: Իմ խոստումս սակայն կը յարգեմ եւ Լազոյի մասին հակիրճ գրութիւն մը կը պատրաստեմ: Կը փորձեմ կապուիլ «Սիւրկել»-ի խմբագրութեան: Տրուած բոլոր հեռաձայնի թիւերը դարձած էին անգործածելի: «Սիւրկել»-ն ալ դադարեցաւ լոյս տեսնելէ: Գրութիւնս ալ մնաց տեղ մը, թողութեան մէջ...:

1980-ականներու սկիզբն էր: Խումբ մը ուսանող ընկերներով փախուստ տուինք Երեւանէն եւ շոգեկառքով մեկնեցանք Թիֆլիս, ներկայ ըլլալու Արարատ-Տինամօ Թիֆլիս ֆուլթայլի խաղին: Կանուխ հասանք եւ մինչեւ խաղը անգիրն ժամանակ ունէինք: Շրջեցանք հայկական թաղամասը՝ Հապլաւար, այցելեցինք հայոց եկեղեցին, պահ մը կանգ առինք Սայեաթ Նովայի գերեզմանին շուրջ ու բարձրացանք Խոջավանք՝ Հայկական Պանթէոն: Ռաֆիի գերեզմանին վրայ սինաձեւ կոթողն էր, որուն երկու կողմերուն՝ հայ մեծանուններու միատեսակ գերեզմանաքարերը:

Մէկ առ մէկ այցելեցի գերեզմանները, իւրաքանչիւրին առջեւ պահ մը կանգ առնելով: Լազոյի գերեզմանին կողքի քարերը ինկած էին եւ մոլախոտ բուսած էր: Զեռքով մաքրեցի մոլախոտերը, քարերը ամրացուցի իրենց տեղերը՝ ինչքան որ կրնայի: Հայոց պատմութեան հանդէպ հետաքրքրութիւն չունեցող ընկերներէս մէկը, հաւանաբար զարմացած կատարած գործէս, մօտեցաւ եւ հարցուց.

- Ո՞վ է:
- Մեր մեծերէն մէկը, - պա-

տասխանեցի: Ուրիշ ի՞նչ կրնայի ըսել:

ՆԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- 1) Ատրպետի Յուշերը, Հայաստանի Ազգային Արխիւ. կրկնօրինակը հնչ. արխիւ:
- 2) Նոյն:
- 3) Արձանագրութիւն «Հնչակեան Յեղ. Կուսակցութեան Ընդհ. Ժողով»-ի, 1896: Հնչ. արխիւ:
- 4) Արսէն Կիտուր, «Պատմութիւն Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան», Ա. հտ., Պէյրութ, 1962, էջ 271:
- 5) «Յիւնամեակ Ա. Դ. Հնչակեան Կուսակցութեան», հրատ. ՄԴՀԿ Կեդր. վարչութեան քիւ 25, Փրովիտենս, 1938: Վ. Մարսեան, «Կովկասեան Վերլիշումներ»:
- 6) «Հայրենիք», 1929, Մայիս, քիւ 7. Ն. Խանազատ «Հայ Յեղափոխականի Յուշերից»:
- 7) «Հայրենիք», 1939, Յունուար, քիւ 3. Գ. Եղիկեան «Հնչակեանները եւ Նրանց Պոլշեիկներու Հետ Միանալու Փորձերը»:
- 8) «Արձանագրութիւն Շուվլայի ՄԴՀԿ վարչութեան Նիստին», 15 Նոյ. 1905: Հնչ. արխիւ:
- 9) «Երիտասարդ Հայաստան», 1906 Փետր. 14. Լ. Լազեան, «Թիֆլիսի Վերջին Դեպքերից - Թոռուցիկ Նօթեր»:
- 10) «Երիտասարդ Հայաստան», 1906 Օգոս. 8. Լ. Լազեան «Նամակ Պաթումէն»:
- 11) «Հնչակ», 1935 Օգոստ., Ռ. «Հնչակեան Գործունէութիւնը Սալմաստ - Ուրմի Գաւառներուն Մէջ»:
- 12) Գառնիկ Ստեփանեան, «Կենսագրական Բառարան», Բ. հտ., Երեւան, 1981, էջ 238:
- 13) «Հայկական Սովետական Հանրագիտարան», Դ. հտ., Երեւան, 1978, էջ 474:

- 14) Վրաստանի Ազգային Արխիւ, Ֆ. 2, ց. 1, գ. 3595, ք. 12-14:
- 15) «Քառասնամեակ ՄԴՀնչակեան Կուսակցութեան», Փարիզ, 1930. Յուսիկ Գնդունի, «Ցարիզմի Տապալումէն Վերջ»:
- 16) «Շրջաբերական Ա. Դ. Հնչ. Կուսակցութեան Ռուսաստանի, Կովկասի եւ Պարսկաստանի Մասնաճիւղերին եւ Ընկերներին»: Հնչ. արխիւ:
- 17) «Տիգրան Գագանեանի Յուշերը», Հայաստանի Ազգային Արխիւ. կրկնօրինակը հնչ. արխիւ:
- 18) «Հայաստանում Սովետական Իշխանութեան Ամրապնդման Պատմութեան Մի Գրանի Հարցեր», հրատ. Երեւանի Պետական Համալսարան, Երեւան, 1987. Լեւոնուշ Խուրշուտեան, «Հայաստանի Ոչ Պոլշեարական Կուսակցութիւնների Գաղափարական-Քաղաքական եւ Կազմակերպչական Կրախը (1920-1921 թթ.)»:
- 19) Ա. Սապահ Գիւլեան, «Բաների եւ Եզրերի Բացատրութիւններ», Պոսթոն, 1927, էջ 154:
- 20) «Կոչ», Ազգամիջեան Խորհուրդ, Երեւան, 1920 Հոկտ., 28: ՀՀԿԿԿԿՊԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 6: Կրկնօրինակը հնչ. արխիւ:
- 21) «Հայաստանի Խորհրդ. Իշխանութեան Յեղկոմիւն», ՄԴՀԿ Երեւանի վարչութիւն, 1920 Դեկտ. 11: ՀՀԿԿԿԿՊԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 245: Կրկնօրինակը հնչ. արխիւ:
- 22) «Հայկազեան Հայագիտական Հանդէս», ԻԲ. հտ., Պէյրութ, 2002. Ե. ձեռնագրեան - «ՄԴՀԿ-Կոմիւնիզմի Յարաբերութիւնները»:
- 23) «Հայրենիք», 1939, Ապրիլ, քիւ 6: «Հնչակեաններ եւ Նրանց...»:
- 24) «Նոր Երկիր», 1926, Նոյ. 21:
- 25) «Հայրենիք», 1939, Ապրիլ, քիւ 6:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Մի ոմն գնահատելով «Մասիս»-ի բովանդակութիւնը 100 տոլար կը նուիրէ «Մասիս»-ի բարգաւաճման ֆոնտին:



ՄԱՍՏՏՈՑ ԳՈՒԼԷՏ
Տիկնանց Օժանդակ Մարմին
Չաւեշտի Բացառիկ Երեկոյ
Կատարողութեամբ՝
Տաղանդաշատ Երգիծարան



ՄՏԵՐԱՆ
ՅՈՒՎԱԿԻՄԵԱՆԻ

Ուրբաթ, Մարտ 22, 2013

Երեկոյեան ժամը 7:00-ին

Raffi's Banquet Hall

3887 E. Sierra Madre Blvd., Pasadena CA

Մուտքի Նուէր՝ \$30

Համադրո՞ւմ հաշիք Գեղարուեստական Յայտագիր Անակնկալներ

Տոմսերու համար Հեռաձայնիկ՝

Մաշտոց Գոլե՛ճ՝ 818-548-9345 Արփի՛ 818-912-0884 Իրմա՛ 626-272-9384

massispost.com
daily news updates

ՇՈՒԿԱՆՊԻՍ



ԱՐՈՒՍԵԱԿ ՍԻՆԱՆԵԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան առաջին տարելիցին առթիվ տեղի պիտի ունենայ շիրիմի այցելութիւն Կիրակի, 10 Մարտ, 2013, առաւօտեան ժամը 11:00ին, Հոլիվուտ Հիլզի Փորըսթ Լոն գերեզմանատան Viel of Hope հողատարածքին մէջ: Այնուհետեւ հոգեճաշ պիտի մատուցուի Glendale Metropole ճաշարանին մէջ, 701 South Central Avenue:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

- Սգակիրներ՝ Ամուսինը՝ Սամուէլ Սինանեան
- Զաւակները՝

Տէր եւ Տիկ. Մանուկ Սինանեան եւ ընտանիք

Տէր եւ Տիկ. Կէրի Սինանեան եւ ընտանիք

եւ Սինանեան, Զիլինկիրեան, Ասատրեան, Գաբրիէլեան, Տէր Սահակեան, Սագոյեան, Հայրապետեան, Էճուրեան, Բարսամեան եւ Գարամանուկեան ընտանիքներ եւ հարազատներ՝ Լոս Անճելոսէն, Նիւ Եորքէն, Հայաստանէն եւ Ռուսիայէն:

ՈՂՋՈՅՆ՝ ԶԲԸՄ-Ի ԱՍՊԵՏՆԵՐՈՒ

Շարունակուած էջ 7-էն

գիշեր:

Թիւնն ու յոբելինական կարկանդակի հատումը, որոնցմէ ետք, հրապարակը յանձնուեցաւ պար ու նուագի, որ տեւեց մինչեւ ուշ

«Մասիս» կ'ողջունէ Ասպետներու կառուցողական Շարժումը, անոր յոբելինական տասնամեակին ուրախ առիթով եւ կը մղթէ նոր երթ՝ դէպի նոր տասնամեակ:

ՓՐՈՖ. ՌԻՉԱՐԴ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Շարունակուած էջ 7-էն

կազմակերպուած հանդիսաւոր ճաշկերոյթի հասոյթէն պիտի օգտուին Նարեկացիի անուան Հայագիտական ամբիոնն ու այցելու դասախօսներու ծրագիրը:

Հայոց կաթողիկոսներ՝ Գարեգին Ա.ի եւ Գարեգին Բ.ի Կոնդակներուն ու շքանշաններուն:

1998-ին հիմնուած UCLA-ի Նարեկացիի անուան Հայագիտական Ամբիոնի Բարեկամներ Միութիւնը համալսարանին կողմէ վաւերացուած օժանդակ կազմակերպութիւն մըն է նուիրուած հայագիտական ուսմանց զարգացման: Բարեկամներու կողմէ Մարտ 16-ին

Հանդիսաւոր ճաշկերոյթի տոմսակի գինն է \$125, ուսանողներու համար՝ \$70: Տոմսակները կարելի է գնել հեռաձայնելով (323) 668-2609, (818) 249-3330 թիւերուն եւ կամ Անի Այլագեանին, հեռ. (818) 621-8116, aniaivazian@hotmail.com:

ՇՈՒԿԱՆՊԻՍ



ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆ

Վաստակաշատ արձակագիր, գրականագէտ, «Մասիս»-ի երբեմնի աշխատակից ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆԻ մահուան առաջին տարելիցին առթիւ, Կիրակի, Մարտի 10ին, 2013, Առաջնորդարանի Ս. Ղեւոնդեանց տաճարի մէջ, յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան արարողութիւն:

ՇՈՒԿԱՆՊԻՍ



ՏՕՔԹ. ՄԱՆՈՒԿ ՔԻՒՓԷԼԵԱՆ

ՏՕՔԹ. ՄԱՆՈՒԿ ՔԻՒՓԷԼԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Կիրակի, Մարտ 10ին, 2013, Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու մէջ, 2215 E. Colorado Blvd., յաւարտ Սուրբ Պատարագի:

Սգակիրներ՝

Զաւակը՝ Տիգրան եւ Լիանա Քիւփէլեան եւ զաւակները Մաքսիմ եւ Մարք (Հայաստամ)

Զաւակը՝ Արման եւ Սուսան Քիւփէլեան (Ամսդրտամ)

Քոյրը՝ Շաքէ Քիւփէլեան

Եղբայրը՝ Կարօ եւ Սիլվա Քիւփէլեան եւ զաւակները Փաթիլ եւ Գրիգոր

Մօրաքոյրը՝ Սիրուն եւ Յարութիւն Հալաճեան

եւ համայն Հալաճեան, Մեքիքեան, Կողինճեան, Եռուստֆեան ընտանիքները, հարազատներ եւ բարեկամներ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 13-էն

մեր նշանաբանը մեր գիտակցութեան մէջ չդառնայ խօսք, չմնայ գիր:

Ճամբայ բանալ անոնց որպէսզի կարենան այդ մեծ պատասխանատուութիւնը ստանձնել իրենց եռանդագին տարիքին, նաեւ, իրենց կատարելիք հետազոտութիւններով միջազգային եւ գիտական շրջանակներու մէջ հեղինակաւոր յարաբերութիւններ մշակել: Իրենք են որ պիտի ըլլան նոր վերագարթօնքի մը վճռական նուիրեալ պատմագիտականները: Զոհողութեան ճամբով մեր դատը ճանաչում գտնել տալու համար

Մենք իբրեւ Պոլսահայ Միութիւն, կը հրաւիրենք մեր հայ ժողովուրդը ունկնդրելու այս շատ կարեւոր դասախօսութիւնը, զոյգ ֆրոնթիսօրներու կողմէ, մեր Միութեան սրահին մէջ, հասցէ՞ 19726 Sherman Way, Winnetka, CA 91306.

Մուտքը ազատ է եւ ձեռնարկին աւարտին տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն:

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian

1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ

Մայիս 10, 2013

Բենիամին Ժամկոչեանի գիրքի ներկայացում
Սահակեան Սանուց Միութեան
կազմակերպութեամբ
Մանրամասնութիւնները յաջորդիւ:



Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948



www.syrianarmenianreliefund.org

ՊԱՏԱՐԱԳ ԱՇՏԻՇԱՏՈՒՄ

Շարունակում էք 16-էն

բուժիչներին մասնակցելու:

Սպիտակ նոյնի քաղաքում Արմինա երկրի Նախրեան գահատոհմի արքան, նախնիների Արատտա երկրի արեւի սկաւառակով, նրա երկու կողմերին ճառագայթող արեւին ժպտացող արծիւներով թագը գլխին, Միհր աստուծոյ ճառագայթափայլ հանդերձով ձիաւար թագուհին, այրուձիի վաշտերի եւ նրանց հետեւող տարբեր աւանների շինականների հետ անցնում էին Լեռնաշխարհի ճամբաներով: Անհամբեր էին հասնելու աստուածների բնակավայր՝ Աշտիշատ աւան: Նախրեան շինականները, իրենց Նախրի երկրում պայթած հրաբուխների հալած, հրաբուխ կրակով լիքը փոքրիկ աստուածներ վեր պահած շտապում էին դէպի Աշտիշատ, քանի դեռ կրակը լոյստու էր, այն նուիրաբերու իրենց կրակի ու լոյսի աստուածներ՝ Արայի, Միհրի բազմիներին:

Արմինաների հարաւային կողմն Լեռնաշխարհի Նախրեանների Սուբիր-Սուբարտու աշխարհի իշխանը, լոյսաշող հանդերձով ձիաւար թագուհու եւ հետեւակ գունդի ու շինականների խմբերի հետ գնում էր Մուշ-Մուսասիր դաշտի Աշտիշատ աւան, մասնակցելու Աստղիկ դիցուհու ու Վահագնի հարսանեաց հանդէսին, վարդավառեան ջրի պաշտամունքի տօնախմբութիւններին: Կինը, ճանապարհի բարձրաբերձ լեռների անտառների ծառերի լայն տերեւներին իջած Մանանա (քաղցր ալիւրանման փոշի) լցրած կակամանները ուսերնին, իրենց աստուածների փառաբանման երգերով, իրենց ամուսինների ու զաւակների հետ յաղթ քայլում, Աշտիշատի աշխարհական տօնախմբութիւնների խրախճանքը ըմբռնելով:

ՀԱ-Հայեասա, Հայկական Լեռնաշխարհի Նախրեանների երկրի թագաւոր՝ Թարխիզաման, հրաջրքոտ իրանը գրկած արեւի լոյսի նման թափանցիկ հանդերձով ձիաւար թագուհին, Արմին նախնի-նախնիներ Արատտայի ու նրանց էլ նախնիների թագաւորական գահատոհմերի արեւին ժպտացող յախուռն արծիւների ոսկեհուր թագը գլխին, պահակազնդին ու նրան հետեւող աւանների ու շէնքերի մարդկանց առաջնորդում էին աստուածների Աշտիշատ բնակավայր: Արմինայի ճամբաներով արքայական կարաւանն անցնում էր ոսկեհուր ցորեանի արտերում բացուած ճամբաներով, լեռների ձիւնոտ լանջերից յեղուած գեփիււր կարմրահուր հեղեղի ալեակներ էր հոսում արտերի երեսին: Խաղողի այգիների միջով անցնող ձանապարհին, շէնքի մարդիկ խաղողով լիքը կթոցները վեր պահած ողջունում Հայեասայի թագաւորին, խնդրում այն տանել Աշտիշատ՝ Աստղիկի ու Վահագնի հանդէսի պատարագի տօնախմբութեանը ու իրենց մայր Անահիտի բազմին նուիրաբերել: Պարմանուհիները, իրենց այգիներում հասունացած ծիածանի գոյներով խաղողից քամած գինով լիքը կուժեր են մատուցում պահակազնդին, պատուիրելով Աստղիկի ու Վահագնի ամուսնութեան հանդէսին գինով օժել նրանց ճակատները: Անահիտի բազմին շաղտալ կուժերով գինի, որպէս աստուածներին զոհաբերուած արջարների արիւն, այն Արածանի սրբազան գետի ջրերի նման հոսել նրանց բազմիներին ու մեհեանի չորս դին, վարդավառեան տօնախմբութիւններին գինի ըմպել, խենթեանային


նրա արթնած հրաշէկ վայելքից:

Գինի, Արմին-հայերի նախնի-նախնիները հազար-հազար տարիներ առաջ էլ իրենց հնամենեցու խաղողից քաղցրանուշ հիւթ են քամել, այն գինիացրել ու հնեցրել հարիւր-հարիւր լիտրերով կարասներում: Տիեզերքի անհունների այս երկիր-մոլորակի Սրբազան Լեռնաշխարհում էր, որ առաջին անգամ խաղող, ծիրան, նուռ, ցորեն աճել: Դրախտից վտարուած մարդկանց առաջին ընտանիքը, արգելուած ծառի տիեզերական իմաստութիւնը քաղած հասել էին այդ աշխարհ: Տիեզերական հրաշածին երեւոյթների մարդացած աստուածներն էին այդ Սրբազան Լեռնաշխարհում իրենց հետ բերած խաղող, ծիրան, նուռ, ցորեն աճեցրել: Հանապազորդ հաց, իրենց աստուածների հրաշափառ պարգևն էր այն: Որպէս իրենց խաղողի բերքի երախայրիք, կթոցներով կարմիր, աստանաների աչքերի նման սեւ, արեւոտ, լոյստու խաղող նուիրել նրանց բազմիներին: Նրանից քամած գինին աստուածների խմիչք եղել: Թասերով գինի էին

հոսել աստուածների բազմիներին, թասերով գինի ըմպել վարդավառեան տօնախմբութիւններին, թասերով գինի հոսել իրենց աստուածների, նահապետների, մեծերի պատարագներին: Արքաների պալատական խրախճանքներին, թասերով գինի ըմպել, թասերով գինի հոսել պարի ելած հարճերի իրաններին, գինու արթնած հրաջրքից նրանց հետ պարբունել, նրանց իրաններից վարարած շուռայտած գինի ըմպել: Հին հաւատքի աստուածների տօնախմբութիւններին, աշխարհային շինական ժողովուրդը արքաների, իշխանների հետ գինու թասեր գարկել, շուրջ պար բունել, կարմիր նուռեր գարկել մեհեանների որմերին, նրա արթնած հրաջրքից արբեցած, թէ խենթացած, գրկել պարմանուհիներին, նետուել Արածանի ջրեր իրենց սիրոյ ուխտով մկրտուելու: Նորահարսները դուներին կարմիր նուռեր էին գարկել, որ տունը յաւերժ լինէր, իրենց պատած տներին որմերին խաղող, նուռ քանդակել: Իրենց Սրբազան Լեռնաշխարհի բոլոր ճամբաները տանում էին Աշտիշատ:

Արմին-Հայ արորդի մարդ,

բա՛ց արա երեւակայութեանդ ճախրանքի դարպասները, գնա՛ հազար-հազար տարիներ ետ դէպի նախնիներիդ Մեծամօր ոստան: Եթէ չես գնացել քու հին աստուածների Աշտիշատ աւանի մեհեաններում մասնակցելու Աստղիկ դիցուհու ու Վահագնի հարսանեաց հանդէսի պատարագին, Վարդավառի ջրի պաշտամունքի տօնախմբութեանը, գնա՛ Այրարատ, մի պահ կանգնի՛ր այնտեղ բարձրացած սպիտակ թագը գլխին արեւաճեմ լերան առաջ: Արծիւային թուիչքով բարձրացի՛ր նրա գագաթ, արծուային սրատես ակներով նայի՛ր արեւմտեան կողմն քու Սրբազան Լեռնաշխարհի: Պիտի տեսնես ինչպէ՛ս է Միհր աստուածը կանգնել Աշտիշատի երկնակամարին, լոյս, լոյս ցանում նրա մեհեաններին, նրանց հրապարակներում խուռներամ արեւորդիներ լի վրայ: Պիտի տեսնես Աշտիշատ տանող քու արարչական Լեռնաշխարհի ճամբաներով անցնող կարաւաններին, պիտի տեսնես լեռների գագաթներից նրանց յղած կրակ ողջոյնը, պիտի տեսնես Աշտիշատի մեհեանի չորս դին քու ցեղի համախումբ արեւորդի-արորդիներին:




ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻԵՆԸ
Սիրով կը հրաւիրէ ձեզ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԷՋ
Ո՞րքան յառաջդիմած ենք եւ ի՞նչ ուղղութեամբ
Կատարելագործումներն ու Չախողութիւնները

ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS
Cordially invite you

Armenian Genocide Research and Study Programs in USA
How far we have progressed and in what direction?
Achievements and Failures.



By

Professor Taner Akcam
Kaloosdian/Mugar Chair
Professor of History
Armenian Genocide Studies Clark University - Worcester, MASS.

Discussant

Professor Richard Hrair Dekmejian
Director of USC Institute of Armenian Studies
Professor of Political Science
University of Southern California

Friday, March 22, 2013 at 8 PM
OIA Center, 19726 Sherman Way, Winnetka, CA 91306
Free Admission -Lecture in English-Reception will follow

For further details please call OIA office (818) 342-0110